# Ազգ
Azg

16 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՇԱԲԱԹ 20(5103)

ISSN: 1829-1651


## Հայտարարություն

Ռամկավար Ազատական կուսակցությունը, իրատեսորեն գնահատելով պատմական պահը եւ դրա ընձեռած բացառիկ հնարավորությունը, կոչ է անում բոլոր քաղաքացիներին մասնակցել ընտրություններին՝ պատահովելով, որ յուրաքանչյուրի քվեն ծառայի իր նպատակին եւ բացառվի չարաշահման յուրաքանչյուր դրսեւորում:

Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է մի իրավիճակ, երբ հնարավոր է դարձել ազատ ու թափանցիկ ընտրությունների անցկացումը, ունենալու համար միջազգային եւ եվրոպական ժողովրդավարության չափանիշներին համապատասխան ընտրված նախագահ:

Հայոց պատմությունը վկայում է. բոլոր այն դեպքերում, երբ միակամվել ու բռունցքվել ենք՝ հաղթել ենք: Այսօր էլ ունենք հաղթելու այդ բացառիկ հնարավորությունը:

ՌԱԿ-ը ՀՀ քաղաքացիներին կոչ է անում միասնաբար մասնակցել ընտրություններին, համախմբվել մեկ գաղափարի ու արժանի առաջնորդի՝ գործող նախագահ Սերժ Սարգսյանի շուրջը եւ կերտել լավագույն ու ապահով ապագան:

Գործող նախագահը վայելում է ոչ միայն Հայաստանի, այլեւ սփյուռքահայության աջակցությունը, ինչի վկայությունն էին Մոնրեալում (Կանադա), Նյու Յորքում, Լոս Անջելեսում (ԱՄՆ), Լիոնում (Ֆրանսիա) եւ Բեյրութում (Լիբանան) ՌԱԿ-ի սփյուռքյան կառույցների կազմակերպած աջակցության զանգվածային միջոցառումները: Սա մեկ անգամ եւս հաստատում է, որ Սերժ Սարգսյանին ընտրելով ունենում ենք ոչ միայն Հայաստանի, այլեւ աշխարհասփյուռ հայության վստահությունը վայելող նախագահ:

Ռամկավար Ազատական
կուսակցության Հանրապետական
վարչություն

## Ինչո՞ւ Սումգայիթում

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Սումգայիթի առթիվ «ինչո՞ւ» հարցադրման հեղինակային իրավունքը պատկանում է ակադեմիկոս Զիա Բունիաթովին. «Ինչո՞ւ Սումգայիթ» վերտառությամբ նրա հոդվածը տպագրվել է 1989 թ. հունվարին Բաքվի «Կոմունիստ» պաշտոնաթերթում: Առաջին անգամ նա է «քաղաքագիտական» շրջանառության մեջ դրել «Սումգայիթը ձեռնտու էր հայ ազգայնականներին» տեսակետը: Ինչո՞ւ Բունիաթովը:

Հարցադրումները միանշանակ պատասխան չունեն: Այդուհանդերձ, դիմենք ականատեսի՝ ադրբեջանցի քաղաքագետ Զարդուշ Ալիզադեի վկայությանը. «Սումգայիթի ջարդից հետո ԳԱ-ում (Ադր. ԽՍՀ Գիտությունների ակադեմիայում - Վ. Ա.) եւս մի աղմկոտ միտինգ եղավ... Ինչպես միշտ՝ ապոգեյի պահին հայտնվեց ակադեմիկոս Զիա Բունիաթովը: Դահլիճը նրան դիմավորեց ծափողջույններով... Նա մի քանի կսմիթներ բաց թողեց հարեւանների (հայերի - Վ. Ա.), մի քանի սուր բառեր ասաց հանրապետության (Ադրբեջանի) ղեկավարության հասցեին... Այնուհետեւ վերեւներին (ԽՍՀՄ ղեկավարությա՞նը - Վ. Ա.) խորհուրդ տվեց ուշադրություն դարձնել նրանց, որ «կարող են պաշտպանել հանրապետությունը (Ադր. ԽՍՀ-ն - Վ. Ա.), եւ չհենվել «վախկոտների եւ պատիկարների վրա»: Հետո նա դահլիճին խորհուրդ տվեց ցրվել, ինչը եւ տեղի ունեցավ՝ բոլորի կողմից հայրենիքի հանդեպ պարտքը կատարած լինելու զգացումով (տես http://azeri-books.narod.ru/politika/zardusht–alizade/konets–vtoroy–respubliki.htm):

Կուսակցության Բաքվի քաղկոմի 1-ին քարտուղար Ֆուադ Մուսաեւը այսպես է պատկերել սումգայիթին նախորդած իրավիճակը. «Փետրվարի (1988 թ.) սկզբից Հայաստանից Ադրբեջան էին հասել արդեն հարյուրավոր փախստականներ: Նրանք հանգրվանել էին Բաքվի մերձակա գյուղերում, որտեղ համահավաք ապրում էին իրենց համերկրացիները (ծագումով Հայաստանից ադրբեջանցիները): Ծնունդով Հայաստանից, Ապշերոնի շրջկոմի 1-ին քարտուղար Զոհրաբ Մամեդովն ամեն առավոտյան փախստականներին ավտոբուսներ է տրամադրել, որ նրանց հասցրել են ոչ թե ԿԿ, Գխ կամ Նախարարների խորհրդի շենքի մոտ, այլ՝ ուսանողական եւ բանվորական հանրակացարաններ... Ամեն պահի կարող էր գտնվել մեկը, որ զայրացած ամբոխին կտաներ դեպի Բաքվի հայկական թաղամասեր»: Տես էջ 8




## «Ամեն տարի ապրիլին ցեղասպանության ճաշը եփում եւ մեզ են հրամցնում»

### Հայտարարել է Փաթիհի քաղաքապետը՝ մեկնաբանելով Ստամբուլում հայ կանանց դեմ հարձակումները

Հունվարին «**Ազգը**» մի քանի անգամ անդրադարձավ Ստամբուլի հայաշատ թաղամասերում զառամյալ հայ կանանց դեմ վայրենաբար իրականացված հարձակումներին: Դրանց ընդհանուր թիվը 5 է, թիրախներից երկուսին դաժան ծեծի ենթարկելուց, դաշունահարելուց հետո կոկորդը կտրելով սպանել էին եւ կուրացրել երկուսի աչքը:

Առաջին սպանությունը տեղի էր ունեցել նոյեմբերի 28-ին Շիշլիի Ֆերիքյոյ թաղամասում, մյուսները՝ Ֆաթիհ շրջանի մաս կազմող Սամաթիայում: Չնայած դրան, հարձակումներին Ստամբուլի նահանգապետը արձագանքել էր հունվարի 26-ին, իսկ Ֆաթիհի քաղաքապետը՝ հունվարի 27-ին միայն, այն էլ գողության սովորական միջադեպի հանգեցնելու նկրտումով: Մինչդեռ նախքան նահանգապետի ու քաղաքապետի արձագանքը իրավապահ մարմինները մամուլին տեղեկացնում էին, որ սպանված կանանց բնակարանից որեւէ իր չի կորել, ոչ էլ կողոպտվել են հարձակման թիրախները: Տես էջ 8

## «Աստղային անձրեւ» Չելյաբինսկի մարզում

### Հավանական պատճառը Երկրի մոտով անցնող երկնաքարն է



Փետրվարի 15-ի առավոտյան ՌԴ Չելյաբինսկի մարզի բնակիչները ականատես եղան մի տարօրինակ երեւույթի, որը հիշեցնում էր «աստղային անձրեւ». երկնքում որոտում էին պայթյուններ, իսկ երկրի վրա ընկնում էին շիկացած բեկորներ: Հարվածային ալիքի հետեւանքով մի շարք բնակելի շենքերում փշրվեցին ապակիները, որոշ շենքերում, այդ թվում՝ ցինկի գործարանում եւ «Պարկ Սիթի օթելի» շենքում, պոկվեցին տանիքները: Նախնական տվյալներով՝ մոտ 500 մարդ վնասվածք է ստացել, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը: Փակվել են մարզի դպրոցները եւ մանկապարտեզները:

Պատահարը մեկնաբանելիս մասնագետները հայտարարել են, որ արտասովոր երեւույթները մթնոլորտի ստորին շերտերում աստղի հայտնվելու հետեւանք են:

Իրավապահ մարմինները նշում են, որ տարածաշրջանում որոշ արձանագրվել է ինչ-որ օբյեկտի անկում: «Ընդսմին ոչ մի օդանավ Ուրալում վթարի չի ենթարկվել, բոլոր օդանավերը թռչում են ըստ չվացուցակի», ընդգծել են իրավապահները:

Այդուհանդերձ, Չելյաբինսկում իրականացվել է մասնակի տարհանում: Ոստիկանությունն անցել է ծառայության ուժեղացված ռեժիմի, քաղաքի ռազմավարական եւ կենսականորեն կարեւոր բոլոր օբյեկտները առնվել են խիստ հսկողության տակ: Օդից իրականացվում է տեղանքի հետազոտություն:

Ստացված տեղեկությունների համաձայն, երկնային մարմնի հիմնական բեկորն ընկել է Չելյաբինսկի մարզի Սատկա քաղաքից 80 կմ հեռավորության վրա: Նշվում է, որ եվրոպական արբանյակներից մեկը տեսագրել է աստղի անկումը եւ գետնի վրա ձագարի գոյացումը: Տես էջ 2

## Մոնթրէալի մէջ ՌԱԿ-ի գլխաւորութեամբ զօրակցութիւն կը յայտարարուի Սերժ Սարգսեանին

***Լիոն (Ֆրանսիա), Բեյրութ (Լիբանան), Լոս Անջելես, Նյու Ջերսի (Մ. Նահանգներ) եւ Մոնթրեալ (Կանադա)-ահա՛ այն հայաշատ ոստանները, որտեղ անցնող օրերին, կազմակերպությամբ Ռամկավար Ազատական կուսակցության շրջանային վարչությունների, տեղի ունեցան զորակցության հավաքներ ի նպաստ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի: Բոլոր այդ վայրերում (ի դեպ, նման հավաք ծրագրված էր նաեւ Կահիրեում, փետրվարի 2-ին, սակայն Եգիպտոսում հաստատված արտակարգ դրությունը խանգարեց դրա անցկացմանը) ՌԱԿ-ը եւ աջակից մյուս կազմակերպությունները մեկ անգամ եւս փաստեցին, որ թեեւ սփյուռքահայությունը որպես ձայն ու քվե գործնականում չունի որոշիչ դեր քվեարկությունների հաշվեկշռում, սակայն որպես համահայկական մտահոգությունների ու ծրագրերի կրող՝ իրավունք ունի Մայր հայրենիքի քաղաքական կյանքի այս կարեւոր հանգրվանում իր դիրքորոշումը արտահայտելու:***

Չորեքշաբթի, փետրուար 13-ին, ընտրանի հասարակութեան մը ներկայութեամբ տեղի ունեցաւ նախընտրական հաւաք մը, Մոնթրէալի Թէքէեան մշակութային միութեան արդիական գեղեցիկ կեդրոնին մէջ, ի նշան զօրակցութեան նախագահական թեկնածու եւ շրջանաւարտ նախագահ՝ Սերժ Սարգսեանի:

Զօրակցութեան այս հաւաքը կազմակերպուած էր ՌԱԿ Շրջանային վարչութեան կողմէ: Ներկայ էին կուսակցական ընկերներ, ինչպէս նաեւ գաղութի կարեւոր կազմակերպութեանց ղեկավարներ եւ ընդհանրապէս ազգային հարցերու նկատմամբ լուրջ հետաքրքրութիւն ունեցող բազմաթիւ մոնթրէալահայեր: Բոլորը եկած էին լսելու Հայաստանի նախագահական ընտրութիւններու մասին տեղեկութիւններ, համոզիչ բացատրութիւններ եւ վերլուծումներ, համոզուած կերպով զօրակցելու համար նախագահ Սերժ Սարգսեանին: Տես էջ 3




Դոկտ. Արշաւիր Կէօնճեան իր ելոյթի պահուն

# Սոցփաթեթի գումարները կտրամադրվեն բանկերի միջոցով

## *Փաթեթից օգտվողների թիվն ավելացել է 30 հազարով*




2013-ին սոցիալական փաթեթում կընդգրկվեն եւս 30 հազար մարդ: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը**: Նա նաեւ անդրադարձավ այս տարի սոցիալական փաթեթում կատարված մյուս փոփոխություններին: Սոցիալական փաթեթից օգտվող 120 հազար պետական աշխատողներից բացի, այս տարի կավելանան պետական կառույցներում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցները, Գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակազմը եւ նրա ենթակայության տակ գտնվող պետական ոչ առեւտրային կազմակերպությունների աշխատակիցները, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ԽՍՀՄ եւ ՀՀ «ժողովրդական» պատվավոր կոչմանն արժանացած անձինք, Երեւանի մետրոպոլիտենի աշխատողները՝ բացառությամբ ղեկավար անձնակազմի:

Այս տարի եւ յուրաքանչյուր աշխատակցին տրվող տարեկան գումարը կկազմի 132 հազար դրամ՝ ամսական 11 հազար դրամ: Գումարը պետք է ծախսվի 4 ուղղություններով՝ առողջության ապահովագրում, հիպոթեքային վարկի ամսական վճարի մարում, ուսման վճար, հանգստի կազմակերպում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի տարածքում: Ինչպես եւ անցած տարի, այդ գումարից 52 հազարը կուղղվի առողջապահության ապահովագրության ծառայության համար, բայց ընդլայնվել է հատուցվող դեպքերի շրջանակը: Ինչպես հայտնեց ֆինանսների նախարարը, մասնավորապես սրտի վիրահատության հետ կապված, բացի ստենդից, փոխհատուցման մեջ են ներառվել նաեւ սրտի ռիթմը կարգավորող սարքերի, փականների պրոթեզները: Տեղեկացվեց նաեւ, որ անցյալ տարի փաթեթի շրջանակներում 260 սրտի վիրահատություններ են արվել:

Կարեւոր փոփոխություններ են կատարվել նաեւ սոցիալական փաթեթի հատկացման գործընթացում: Այս տարի գումարը հատկացվելու է բանկերի միջոցով՝ հատուկ այդ նպատակով աշխատողների կողմից բացված բանկային հաշվի վրա: Այսինքն, փաթեթի մեջ ընդգրկված բոլոր աշխատողները պետք է բացեն բանկային հաշիվներ: Այդ կապակցությամբ 8 բանկերի հետ պետությունը պայմանագրեր է կնքել: Վաչե Գաբրիելյանն ընդգծեց, որ այդ հաշիվներին ուղղված գումարները կարող են փոխանցվել միայն փաթեթով նախատեսված 4 ուղղություններով:

Հաջորդ նորությունն այն էր, որ սոցիալական փաթեթի գումարները այս տարվանից դառնալու են կուտակային, որոնց վրա բանկերի կողմից ավելացվելու են տոկոսադրույքներ: Այսինքն, եթե մարդը չի ցանկանում այս տարի ծախսել փաթեթով իրեն հասանելիք գումարը, կարող է ծախսել հաջորդ տարի, բայց դարձյալ փաթեթով նախատեսված ուղղություններով:

Ֆինանսների նախարարը տեղեկացրեց նաեւ, որ սոցիալական փաթեթի համար 2013-ին պետական բյուջեից տրամադրվել է 21,5 մլրդ դրամ:

«**Ազգի**» հարցն առնչվում էր սոցիալական փաթեթից չօգտվող պետական համակարգի՝ պետական բուհերի եւ բուժհաստատությունների աշխատակիցներին: «Ինչո՞ւ դասախոսներն ու բժիշկները ընդգրկված չեն այդ փաթեթում» հարցին Վաչե Գաբրիելյանը պատասխանեց, որ դա պայմանավորված է նրանով, որ բուհերն ու բուժկենտրոնները, բացի պետական բյուջեից, այլ եկամուտներ եւս ստանում են, իսկ փաթեթում նախ եւ առաջ ընդգրկված են նրանք, ովքեր միայն պետբյուջեից են վճարվում: Բուհերի եւ բժշկական կենտրոնների աշխատողներին հետագայում սոցփաթեթում ընդգրկելու համար նախարարը ոչինչ չխոստացավ, ասելով, որ «կնայենք բյուջեի հնարավորություններին»:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած բուհերն ու բուժկենտրոններն ունեն օրինական այլ եկամուտներ ստանալու հնարավորություններ, բայց դասախոսների եւ բժիշկների աշխատավարձերը առանձնապես շատ չեն տարբերվում սոցփաթեթում ընդգրկված քաղծառայողների եւ մանկավարժների աշխատավարձերից:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Միջազգային» շորթողը ձերբակալվեց

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-հետախուզական միջոցառումներով բացահայտվել է խոշոր չափերով գումար շորթելու դեպք:

ՀՀ քաղաքացի Կարեն Աշոտի Սիմոնյանը, շահադիտական նկատառումներով, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տնօրեն Խուան Պաբլո Գեչիջյանից առանձնապես խոշոր չափերով գումար շորթելու դիտավորությամբ, 2013 թվականի հունվարի 21-ից փետրվարի 14-ը ներկայանալով որպես միջազգային ահաբեկչական կազմակերպության անդամ, պահպանելով գաղտնիության որոշակի կանոններ՝ փորձելով թաքցնել հետքերը, զգեստափոխվելով, Երեւանի տարբեր վարչական շրջաններում գործող ինտերնետ ակումբներից, Խուան Պաբլո Գեչիջյանին եւ նրա ընտանիքի անդամներին սպանության սպառնալիքներով էլեկտրոնային հաղորդագրություններ է ուղարկել վերջինիս էլեկտրոնային հասցեին, որոնցում հանցավոր սպառնալիքներն ի կատար չածելու դիմաց պահանջել է վճարել 80 մլն ՀՀ դրամ գումար:

Փետրվարի 14-ին Կարեն Աշոտի Սիմոնյանը ձերբակալվել է, երբ փորձում էր իրականացնել իր հանցավոր մտադրությունը:

Փաստի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ՀՀ քր. օր-ի 182-րդ հոդվածի հատկանիշներով:

**ՀՀ ԱԱԾ Մամուլի կենտրոն**

# «Աստղային անձրեւ» Չելյաբինսկի մարզում

*1-ին էջից*

Ինչ վերաբերում է երկնային մարմնի հայտնվելու անմիջական պատճառներին, հավանաբար այն կապված է Երկրից ընդամենը 28 հազար կմ հեռավորության վրա անցնող 45-մետրանոց 2012 DA 14 երկնաքարի հետ, որի քաշը 130 հազար տոննա է: NASA-ի մասնագետների հաշվարկների համաձայն, այդ երկնաքարը Երկրի մոտով պետք է անցներ փետրվարի 15-ի ուշ երեկոյան՝ Երեւանի ժամանակով 23.20-ին: Գիտնականները ենթադրում են, որ Երկրի ձգողականության հետեւանքով երկնաքարից կարող էին պոկվել բեկորներ եւ ընկնել Ուրալի վրա:

Իսկ հայ մասնագետ, Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ **Արեգ Միքայելյանը** բացատրում է, որ Երկրի մթնոլորտ ժամանակ առ ժամանակ թափանցում են տարբեր երկնաքարեր ու աստղակերպեր, իսկ աստղակերպերն ավելի խոշոր մարմիններ են: Ա. Միքայելյանը նշում է՝ եթե դրանք չեն հասցնում այրվել Երկրի մթնոլորտում, ապա հասնում են Երկրի մակերեւույթ ու կարող են առաջացնել տեղական բնույթի փոքր աղետ, ինչպես եղավ Չելյաբինսկի մոտ: Իսկ գլոբալ առումով, ըստ Արեգ Միքայելյանի, Երկիր մոլորակի վրա նման երեւույթը կարող է վտանգավոր լինել միայն այն դեպքում, եթե Երկիր ներթափանցի շատ խոշոր մարմին: Եվ ամենեւին պետք չէ անհանգստանալ, որ Չելյաբինսկի մոտ կատարվածը Հայաստանի վրա կբերի որեւէ ազդեցություն, քանի որ Չելյաբինսկը Հայաստանից բավականաչափ հեռու է:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԴԻՈ

# «Ժողովրդավարության հուսահատ որոնում» Հայաստանում

***Գերմանական Deutschlandradio-ն փետրվարի 14-ին անդրադարձել է ՀՀ նախագահական ընտրություններին: Գեզինե Դորնբլյութի՝ Երեւանում պատրաստած ծավալուն անդրադարձը տարբերվում է գերմանալեզու լրատվամիջոցներում այդ թեմայով մինչեւ այժմ հրապարակվածներից: Ստորեւ՝ համառոտ «Ժողովրդավարության հուսահատ որոնում» վերնագրյալ հաղորդումը «Հայաստանում արդեն նախապես հաստատված է, թե ով է հաղթող թեկնածուն» ենթավերնագրով:***

**Հեղինակն անդրադառնում է Հայաստանի մեկուսացված վիճակին, առաջիկա նախագահական ընտրություններում ընդդիմության հնարավորության բացակայությանը, նկատելով, թե հարուստ հեռանկար ունեցող թեկնածուները չեն էլ մասնակցում: Անդրադառնում է 42-ամյա Անդրիաս Ղուկասյանի՝ հունվարի 21-ին սկիզբ առած հացադուլին: Ղուկասյանը բացատրում է, թե «իշխող կուսակցությունը նախորդ բոլոր ընտրություններին ընտրածայները գնել է, ստիպել պետական ծառայողներին քվեարկել իր թեկնածուների օգտին, որ քրեորեն հետապնդելի է եւ հակառակ ՀՀ սահմանադրությանը: Իշխող կուսակցությունը ստեղծել է ընտրությունների վրա ազդող մի մեքենա, չկա այդ մեքենան կանգնեցնելու իրավական հնարավորություն: Այդ պատճառով էլ հացադուլ եմ անում»:**

**Հայաստանում 1999-ից է ազգային պահպանողական Հանրապետական կուսակցությունն իշխանության գլուխ: 59-ամյա Սերժ Սարգսյանը 2008-ին ուժեղ մրցակից ուներ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որ զանգվածներին փողոց էր հանում: 2008-ի ընտրություններին ակնհայտ մեքենայություններ եղան: Շաբաթներ շարունակ խաղաղ ցույցեր, որ մարտի 1-ին 10 զոհ արձանագրեց, բազմաթիվ վիրավորներ, ձերբակալվածներ: Քաղաքագիտություն ուսանած Հրաչյա Ղամբարյանն էլ 2008-ին փողոց էր ելել, այժմ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի գրասենյակում է աշխատում: Նրա պատմելով, այժմ 2008-ից շատ է տարբեր՝ մարդկանց ընտրությունները չեն հետաքրքրում: Նրանք հիասթափված են: Բացի դրանից՝ գործող նախագահը հող է տարել, որ գործնականում որեւէ մրցակից չունենա: Շախմատային այս խաղում մի շարք խաղացողներ ժամանակից շուտ իրենց մաս են արել, հաղորդում է գերմանական «Դոյչլանդռադիոն»՝ նշելով Լեւոն Տեր-Պետրոսյանին, Գագիկ Ծառուկյանին:**

**Մութ է նաեւ դաշնակների ընտրաթեկնածու չունենալու պատճառը: Շանս չունեցող 6 թեկնածուներ Սարգսյանի դեմ, որոնց մեջ նաեւ հայ էպոսի անծանոթ մի փորձագետ: Ծայրահեղ անդամալույծ ընտրապայքար: Նույնիսկ մայրաքաղաքում ընտրագովազդ հազիվ թե տեսնես: Գերմանական ռադիոն անդրադառնում է Պարույր Հայրիկյանի մահափորձին՝ նշելով, թե շարժառիթը պարզ չէ: Հայերը ընտրություններին հումորով են վերաբերվում, ասում է ռադիոն՝ Հրաչ Ղամբարյանին խոսափող տրամադրելով «Շատերը չեն էլ ուզում ընտրությունների մասնակցել կամ էլ ընտրել են՝ բոլորին դեմ քվեարկել»: Մարդիկ դժգոհ են, ուզում են, որ մի բան փոխվի: Վերջին 5 տարում 250 000 մարդ լքել է երկիրը, որ մոտավորապես հավասար է մայրաքաղաքաբնակների մեկ հինգերորդին: Արտասահմանում ապրողները դրամ են ուղարկում, աշխատավարձով հազիվ թե որեւէ մեկը կարողանա ապրել, հաղորդում է «Դոյչլանդռադիոն», անդրադառնալով խանութների թանկ գներին: «Տեսնում եք՝ վաս ենք ապրում: Հաճախորդներս վճարում են, երբ աշխատավարձ են ստանում», ասում է Էդուարդ Մանուկյանը, որ փոքրիկ խանութ ունի: 60 սենթ կազմող ալյուրի կգ-ն ավելի թանկ է, քան Գերմանիայում: Մարդիկ միս չեն գնում, հաց, մակարոնեղեն, կարտոֆիլ, երշիկ, պանիր, հավ բոլորը չեն կարող գնել»: Նվազագույն 70 եվրո աշխատավարձը շատ քիչ է թանկ գների հետ համեմատած:**

**Հայաստանի տնտեսական վաս վիճակը ռադիոն մեկնաբանում է Ադրբեջանի հետ ունեցած հակամարտությամբ, փակ սահմանով: «Հայերը հաղթեցին պատերազմում, դրանից հետո նրանք ոչ միայն Ղարաբաղը, այլեւ սահմանակից ադրբեջանական տարածքն էլ իրենց վերահսկողության տակ են պահում, այն է՝ հարեւան երկրի մեկ հինգերորդ մասը», ադրբեջանցիներին երկրորդում է գերմանական ռադիոն՝ անդրադառնալով նաեւ Թուրքիայի հետ փակ սահմանին, որի բացման դեպքում, ինչպես նախարար Տիգրան Դավթյանն է նկատում, ուղիղ ելք է բացվում դեպի եվրոպական տրանսպորտային հանգույց: Հայաստանի տնտեսական թշվառությունը ռադիոլրագրողը պայմանավորում է ոչ միայն արտաքին քաղաքական պատճառներով, այլեւ «օլիգարխիկ ժողովրդավարությամբ»: Նրանց մի մասը խորհրդարանում է, իրենց իմունիտետն ապահովելու նպատակով, քաղաքականության եւ գործարար աշխարհի կապը շատ սերտ է, ընդդիմադիր գործիչ Վահագն Խաչատրյանի խոսքն է փոխանցում ռադիոն՝ նշելով, թե շաքարի ներկրումը մի հոգու ձեռքում է, բենզինինը՝ 2, դեղորայքը՝ 7, կարագը՝ 3: Հայաստանը ԵՄ-ի հետ ասոցացման բանակցություններ է վարում, պիտի իր շուկան ազատականացնի: Հարցական է՝ Սերժ Սարգսյանը լուրջ կընդունի այս կետը եւ պաշտոնավարման երկրորդ շրջանում օլիգարխների դեմ կգնա՞: Վահագն Խաչատրյանը թերահավատ է՝ «Համակարգը չի փոխվի»: Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանն ավելի լավատես է: Նրա ասելով, Հայաստանի նախագահները մինչ այժմ օլիգարխների հետաքրքրությունների պիտի ծառայեին, քանի որ նրանք օգտակար էին լինում դրամով եւ ազդեցությամբ, այս անգամ այլ է: Եթե հանրությունն այսքան աղքատ մնա, անկայուն վիճակն անխուսափելի է, սա ամեն մի նախագահ հասկանում է, նկատել է տվել Նավասարդյանը: Բազմակարծությունն այլընտրանք չունի: Լուրջ մրցակիցներից ազատագրված Սարգսյանը թույլ է տվել լրատվամիջոցներին ազատ գործել: «Հայաստանի իշխանությունների համար կարեւոր է միջազգային գործակիցներին փաստել, թե այստեղ ժողովրդավարական բարեփոխումներ են կայանում», Նավասարդյանի դիտարկումն է մեջբերում մեկնաբանը: «Մի քիչ դրական բան այդուհանդերձ կա, ասում է Հրաչ Ղամբարյանը, շատ երիտասարդներ կան, որ հետաքրքրված են քաղաքականությամբ, ուզում են պետության ձեւավորման մասնակիցը լինել: 5, 10 տարի հետո երիտասարդները կառաջնորդեն, նրանք երկիրը փոխելու մեծ շանս ունեն», հաղորդումը եզրափակում է «Դոյչլանդռադիոն»:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

ԱԶԳ

Անցուդարձ

# Րաֆֆի Հովհաննիսյան. 25 օրվա ընթացքում ժողովրդի ոգին եւ գիտակցությունը բարձրացել է

«Հնարավոր է»: Սա նախագահի թեկնածու, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական կարգախոսն է: Յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում այս կարգախոսը, ինքը՝ Րաֆֆին, հայտարարում է, որ այս կերպ ինքն ազդարարում է, որ հնարավոր են արդար ընտրություններ, քաղաքացիական հասարակության լուրջ դերակատարում եւ «Րաֆֆիի Հայաստան»: «Րաֆֆիի Հայաստան» ասելով նա նկատի ունի այն ծրագրերը, որոնք առաջարկում է եւ որոնց լուծմամբ մենք կունենանք այլ Հայաստան, որը նման չի լինի «Սերժի Հայաստանին»:

Թեպետ Րաֆֆի Հովհաննիսյանը քաղաքական ասպարեզում է շուրջ քսան տարի, սակայն նախագահի թեկնածու առաջադրվում է առաջին անգամ: «Մեկ անգամ եւ միասին»: Մինչ նախընտրական արշավը Հովհաննիսյանը հայտարարեց, որ նախագահական ընտրություններին կառաջադրվի մեկ անգամ եւ այլեւս երբեք, հետեւաբար «հաղթանակի պետք է հասնել միասին«: Քարոզարշավի կեսերին Հովհաննիսյանը ներկայացրեց 5 քայլ, որոնք պետք է մեզ տանեն դեպի նոր Հայաստան: Շատերը մեղադրեցին Հովհաննիսյանին ընդօրինակման մեջ՝ «100 քայլ» Բագրատյանն է ներկայացրել, «Ապահով Հայաստան» ցանկանում է ստեղծել Սերժ Սարգսյանը: Սակայն այդ մեղադրանքներին Հովհաննիսյանը չարձագանքեց: Ի տարբերություն նախագահի այլ թեկնածուների՝ Հովհաննիսյանի քարոզարշավն անհատական էր: Ինչպես նախորդ երկու խորհրդարանական ընտրություններին, փետրվարյան ընտրություններին ընդառաջ Րաֆֆին կրկին ընտրեց մարդկանց հետ հանդիպման այդ տարբերակը: Բակերում, գյուղերում եւ համայնքներում քարոզարշավ անցկացնելուն զուգահեռ Հովհաննիսյանն այցելեց մետրոպոլիտեն, խանութ, եկեղեցի ու վարսավիրանոց: Նախընտրական քարոզարշավի սկզբում Հովհաննիսյանի շտաբից հայտարարություն տարածեցին, որ նրան արգելում են հանդիպել ուսանողության եւ մանկավարժների հետ: Ավելի ուշ արդեն Հովհաննիսյանի շտաբից ԿԸՀ ներկայացրին խախտումների մի ամբողջ տրցակ, որտեղ ժառանգականները ներկայացնում էին, թե ինչպես է իշխող կուսակցությունը՝ Հանրապետականը, վարչական ռեսուրսն օգտագործում հօգուտ գործող նախագահի: Իսկ ընդհանուր առմամբ, քարոզարշավի ընթացքից Հովհաննիսյանը դժգոհ չէ: Հասարակության հետ հանդիպումներին համոզվել է՝ իրեն շատերն են սիրում եւ համակրում: Սոցիոլոգները նրան 20-25 տոկոս ձայն եւ երկրորդ հորիզոնական են կանխատեսում, մինչդեռ Րաֆֆին վստահ է, որ փետրվարի 18-ին սկիզբ է դրվելու նոր Հայաստանի եւ ինքը լինելու արդար ընտրված նախագահը: 5 տարի անց նա կկանգնի գեղեցիկ եւ խելացի կնոջ կողքին եւ կզորակցի նրան 2018-ին կայանալիք նախագահական ընտրություններին:



Մինչ գնահատական տալն ու քարոզարշավի ամփոփումը Հովհաննիսյանը շնորհակալություն է հայտնում լրատվամիջոցներին, ովքեր լուսաբանել են իր հանդիպումները: Իր խոսքերով՝ անցնող 25 օրվա ընթացքում Հայաստանում աննկարագրելի փոփոխություններ են տեղի ունեցել, ժողովրդի ոգին եւ գիտակցությունը բարձրացել են: Հովհաննիսյանը վստահ է, որ կատարվածը ոչ թե անձի կամ կուսակցության, այլ հայ մարդու իրավունքի Հայաստան ունենալու պայքարն է: Նախագահի թեկնածուն նշում է, որ «բժիշկների, ուսուցիչների եւ զինվորների ուղղորդում կա, սակայն կան նաեւ փոփոխություններ: «Առաջին անգամ քսան տարվա ընթացքում դե յուրե նախագահ ենք ունենալու, եւ այդ պարագայում էական չէ կաշառքը, թաղային հեղինակությունը, զանգերն ու վախը: Եթե ժողովուրդը հավատա եւ մասնակցի ընտրություններին, ապա փետրվարի 18-ին հաղթանակ կլինի»: Հովհաննիսյանի շտաբը նախընտրական քարոզարշավի ընթացքում բազմաթիվ խախտումներ է հայտնաբերել, դրանց որոշակի մասը լուծվել է, սակայն ուշացումով, բազմաթիվ ընտրախախտումներին էլ դեռեւս չեն արձագանքել: «Այսքանով հանդերձ, պայքարից չեմ հրաժարվում, քանի որ վստահ եմ, որ հայ ժողովուրդը կողմնորոշված է, իսկ եթե փողը, որ արդեն սկսում են բաժանել, կամ կրկնակի քվեարկության դեպքեր լինեն, ապա մենք հայտարարում ենք, որ լինելու ենք հետեւողական եւ յուրաքանչյուր խախտում ներկայացնելու ենք իրավապահ մարմիններին, եւ մեղավորները պատասխան են տալու»:

Րաֆֆի Հովհաննիսյանը Սերժ Սարգսյանին համարում է անձնավորություն, որը սովորելու, լսելու եւ հետեւություն անելու ունակություն ունի: «Նա ցույց է տվել այդ հնարավորությունը, հետեւաբար ես հիմա իրեն խորհուրդ եմ տալիս ազատ թողնել մարզպետներին, հրամանատարներին ու հրամայել չկիրառել պաշտոնը՝ ընտրություններին ձայն հավաքելու համար: Պայքարը ոչ թե Սերժի կամ Րաֆֆիի միջեւ է, այլ՝ ժողովրդի հաղթանակի, սահմանադրական եւ իրավական երկրի հիմքը դնելու համար: Եթե Սերժ Սարգսյանը նման քայլ կատարի, ապա դա կլինի ավելի մեծ հաղթանակ, քան Արցախում տարած հաղթանակը: Եթե ոչ՝ ապա ընտրությունների հեքիաթը կվերջանա»:

Հովհաննիսյանի շտաբը սոցհարցումներ չի կատարել, ասում է՝ իր համար գլխավորը քաղաքացիական զարկերակն է, որ ունի, եւ համոզվել է, որ հասարակությունը Րաֆֆիին սիրում է: «Իմ պատգամը մեկն է, ժողովուրդը պետք է գնա հաղթանակի առանց ինչ-որ մեկ թեկնածուի հաղթանակի կամ պարտության: Սա է Հայաստանի նոր վիճակը»:

Երկու օր առաջ նախագահի մեկ այլ թեկնածու, էպոսագետ, ճարտարապետ ու շինարար ներկայացնող Վարդան Սեդրակյանը Րաֆֆի Հովհաննիսյանին եւ նրա հորը՝ Ռիչարդ Հովհաննիսյանին մեղադրեց մասոնական կազմակերպությանն անդամակցելու եւ Պարույր Հայրիկյանի դեմ մահափորձ կազմակերպելու մեջ: Թեպետ օրենքով չի արգելվում անդամակցությունը մասոնական կազմակերպությանը, սակայն ինքն ու իր հայրը երբեւէ չեն անդամակցել: «Ամեն մեկն իր տեսակետն արտահայտելու իրավունքի ունի, ես դա ընդունում եմ, սակայն ժխտում եմ սուտն ու կեղծիքը: Սուտ վկայության համար Սեդրակյանը պետք է պատասխան տա դատախազությանը», ասաց Հովհաննիսյանը՝ միաժամանակ շեշտելով, որ նման դիմում դատախազությանը չի ներկայացրել: Ավելին, Հովհաննիսյանը հիշեց, որ 2002-ին առաջին անգամ հանդիպել է Սեդրակյանին: Պարզվեց, որ էպոսագետը Անահիտ Բախշյանի աշակերտն է եղել եւ Հովհաննիսյանի հետ հանդիպմանը «Սասնա ծռեր» էպոսն է ներկայացրել ու Հովհաննիսյանին վերագրել էպոսի առանցքային կերպարներից մեկը: Թե ում կերպարը՝ Րաֆֆին չմանրամասնեց, միայն հստակեցրեց. «Ես չափազանց համեստ մարդ եմ, որ կապ ունենամ էպոսի հետ ու ինձ ներկայացնեմ որպես էպոսի մի կերպար»: Իր խոսքերով՝ մայրն էլ՝ Վարդիթերը չափազանց համեստ կին է եղել եւ գուցե իր աղոթքներում ցանկացել է, որ որդին դառնա նախագահ, սակայն երբեք այդ ցանկության մասին չի բարձրաձայնել: Իրեն էլ դաստիարակել է որպես քաղաքացու, հայրենասեր մարդու, ոչ որպես նախագահի:

Նախագահի թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանի վերջին հանդիպումն այսօր է՝ ժամը 5-ին Ազատության հրապարակում: Հովհաննիսյանը խոստացավ փետրվարի 19-ին՝ կրկին նույն ժամին նույն վայրում ամփոփել նախագահական ընտրությունների արդյունքներն ու գնահատական տալ: Նույն օրը Հովհաննիսյանը նաեւ կհստակեցնի, թե ի՞նչ է պատրաստվում անել, եթե իր ակնկալիքները չարդարանան եւ ինքը չընտրվի նախագահ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՆԱԴԱ

# Մոնթրէալի մէջ ՌԱԿ-ի գլխաւորութեամբ զօրակցութիւն կը յայտարարուի ի նպաստ Սերժ Սարգսեանի

*1-ին էջից*

Երեկոյթը սկսաւ յոտնկայս ունկնդրութեամբ Հայաստանի եւ ապա ՌԱԿ-ի քայլերգներուն: Յայտագրի գործադրութեան ընթացքին ցուցադրուեցան տպաւորիչ եւ խանդավառող տեսաերիզներ, ուր կը ներկայացուէին անցնող հինգ տարիներու ընթացքին նախագահ Սերժ Սարգսեանի առաջնորդութեամբ կատարուած իրագործումները՝ յատկապէս մայր հայրենիքի ապահովութիւնը ամրապնդող եւ տնտեսական վերելքը ուղենշող քայլերը:



*Տոքթ. Հրայր Տէր-Գէորգեան կը ներկայացնէ նախագահ Սերժ Սարգսեանի ընտրական ծրագիրը*

Յայտագրի սկզբնաւորութեան, ՌԱԿ-ի եւ մոնթրէալահայ կեանքի ղեկավար դէմքեր, ընկերներ տոքթ. **Հրայր Տէր-Գէորգեան**, **Արթօ Մանուկեան** եւ **Արա Պալեան** ելոյթ ունեցան նախագահին ի նպաստ դիրքորոշման տարբեր յայտարարութիւններով:

Ապա հանդիսավարը հրաւիրեց սփիւռքահայ ազգային ծանօթ եւ ղեկավար դէմք, ՌԱԿ-ի Կեդրոնական վարչութեան երկարամեայ նախկին ատենապետ՝ դոկտ. **Արշաւիր Կէօնճեանը**, որ ներկաներուն փոխանցեց վերլուծողական ճշգրիտ տեղեկութիւններ եւ բացատրութիւններ, որոնք կը ներկայացնեն այն հիմնական պատճառները, որոնք կ՛արդարացնեն եւ հրամայական կը դարձնեն ՌԱԿ-ի եւ անոր առաջնորդութեամբ սփիւռքահայութեան դիրքորոշումը՝ զօրակցելու Սերժ Սարգսեանի թեկնածութեան: Դոկտ. Կէօնճեան բացատրեց անհրաժեշտութիւնը, որ նախագահ Սերժ Սարգսեան հնգամեայ նոր շրջանի մը ընթացքին կարողանայ շարունակել իր առաջնորդութիւնը եւ կառուցողական գործը ի նպաստ մայր հայրենիքին, հայրենի ժողովուրդին եւ ընդհանրապէս հայութեան:

Դոկտ. Կէօնճեան շեշտեց նախագահ Սերժ Սարգսեանի կատարած մեծ աշխատանքը ի նպաստ Հայաստանի զինեալ ուժերու հզօրացման՝ Արցախի հիմնահարցին խաղաղ պայմաններով վերջնական լուծումի հասնելու, շրջանի երկիրներուն եւ յատկապէս Թուրքիոյ հետ յարաբերութիւնները բարելաւելու եւ վերջապէս Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու բազմերես եւ դժուարին բնագաւառներուն մէջ:

Եղան բազմաթիւ հարցումներ եւ տրուեցան գոհացուցիչ լուսաբանութիւններ: Երեկոյի աւարտին ներկաները բուռն ծափերով եւ համոզուած ու հանգիստ տրամադրութիւններով իրենց անվերապահ համաձայնութիւնը արտայայտեցին շրջանաւարտ Սերժ Սարգսեանի իբրեւ նախագահ վերընտրութեան համար, նաեւ այն համոզումով, թէ սփիւռքը պարտի իր բոլոր կազմակերպութիւններով բարոյական ու գործնական կերպով զօրակցիլ Հայաստանի նախագահին եւ կառավարութեան՝ ի փառս մեր յաւերժական ժողովուրդին եւ հայրենիքին:

Այս ձեռնարկով ՌԱԿ-ը անգամ մը եւս ցուցաբերեց բազմատասնեակ տարիներու իր հիմնական եւ անփոփոխ կեցուածքը առողջ ազգային առաջնորդութիւն տալու մեր ժողովուրդին, նպատակ ունենալով հայրենիքի գերագոյն շահերու ապահովումը:

# «Նաիրիտի» համար բութադիենն երբեւէ չի բերվել Սումգայիթից

Փետրվարի 14-ին, «Կենտրոն» ՀԸ «Ուրվագիծ» հաղորդաշարի ընթացքում, պատասխանելով հեռուստադիտողի՝ «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերությանը վերաբերող հարցին, ՀՀ նախագահի թեկնածու **Հրանտ Բագրատյանը** թույլ է տվել կոպիտ սխալ, տեղեկացնելով, որ «Նաիրիտը» չի կարող վերագործարկել քլորոպրենային կաուչուկի ստացման բութադիենային եղանակը, քանի որ խորհրդային իշխանության տարիներին բութադիենը Հայաստան էր բերվում Սումգայիթից, իսկ հիմա, հայտնի պատճառներով, այդ ճանապարհի վերականգնումը բացառվում է:

Տեղեկացնում ենք, որ «Նաիրիտի» համար բութադիենը երբեւէ չի բերվել Սումգայիթից, քանի որ հետազոտություններով պարզվել է՝ այն քլորոպրենային կաուչուկի ստացման համար որակի բավարար հատկանիշներ չունի:

1979-ից, երբ «Նաիրիտում» գործարկվել է բութադիենային տեխնոլոգիայով կաուչուկի ստացման հոսքագիծը, բութադիենը բերվել է Ռուսաստանի Նովոկույբիշեւսկ քաղաքում գտնվող նավթավերամշակման գործարանից՝ մինչեւ 1992 թվականը:

Պարոն Բագրատյանի տվյալներն իրականությանը չեն համապատասխանում, եւ այսօր միջազգային մրցույթի ներկայացված «Նաիրիտ գործարան» ՓԲԸ արդիականացման եւ վերագործարկման» ծրագիրը ներառում է բութադիենային եղանակով քլորոպրենային կաուչուկի արտադրության վերականգնման շատ իրատեսական հնարավորությունը:

«Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի հասարակայնության եւ ԶԼՄ-ների հետ կապերի ծառայություն

# «Ավազակապետությունը» մնաց, ՀԱԿ-ն էլ չկա

Թե ի՞նչ խնդիր լուծեց 5-6 տարի առաջ ստեղծված Հայ ազգային կոնգրեսը, կխոսենք դեռ, բայց թե ինչո՞ւ, ի՞նչ հիմքով որեւէ ազգային, ավանդական կուսակցության (օրինակ) իր ներսում չներառած դաշինքը կոչվեց հենց «Հայ ազգային» կոնգրես, չգիտենք, հավանաբար ոչ ոք չգիտի: Իսկ թե ինչո՞ւ ենք ՀԱԿ-ի մասին խոսում անցյալ ժամանակով, կարծում ենք, բոլորին է պարզ. ՀԱԿ-ն այլեւս չկա... որովհետեւ Տեր-Պետրոսյանն արդեն 68 տարեկա՞ն է, գուցե:

Փորձենք, այդուհանդերձ հասկանալ: ՀԱԿ-ն ստեղծվեց, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը ցանկացավ վերադառնալ, ՀԱԿ-ը փլուզվեց կամ դադարեց որպես մեկ ամբողջություն գոյություն ունենալուց, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը ցանկացավ հեռանալ: Հետեւաբար, այս գուցե խիստ պատահական կապակցվածությունը հիմնավորում է, որ ՀԱԿ-ն ստեղծվեց, որպեսզի Տեր-Պետրոսյանը հենարան ունենա՝ սեփական կամ իր առաջարկած խնդիրները լուծելու համար, գոնե որոշ ժամանակով, մինչեւ ուժերի ավելի լայն կոնսոլիդացիան, ինչի ակնկալիքն առաջին նախագահը, ՀԱԿ ստեղծելով, իհարկե ուներ: Ստեղծման հենց առաջին օրերից ՀԱԿ-ը հայտարարեց, որ երկրում իշխանությունը «ավազակապետություն է», «քրեաօլիգարխիկ տարրեր», եւ կոչվեց, ինքն իրեն առաքելություն տվեց՝ պայքարել այդ «ավազակապետության», «քրեաօլիգարխիկ տարրերի» դեմ մինչեւ հաղթական ավարտ, ինչն ըստ էության ՀԱԿ-ի, անձամբ Տեր-Պետրոսյանի հաղթանակը լինելով, ներկայացվում էր որպես «ժողովրդի հաղթանակ»: Պետք է նկատենք, որ ժողովուրդը, համենայն դեպս՝ դրա հոծ խմբեր գոնե 5-6 տարի առաջ այս երկու հաղթանակներն իրապես նույնականացնում էին, քանի որ ժողովրդի հոծ խմբեր սպասում էին Տեր-Պետրոսյանի վերադարձին, մոտավորապես այնպես, ինչպես այսօր շատերը, գուցե ոմանք, սպասում են Վանո Սիրադեղյանի վերադարձին:

Ինչեւէ, ՀԱԿ-ը լծվեց պայքարի, բնականաբար անմիջապես առաջ եկավ հին ու բարի կարգախոսը՝ «Պայքար, պայքար մինչեւ վերջ» (չնայած անհասկանալի է մնում, թե ի՞նչ բարի բան կա պայքար երեւույթի մեջ), սակայն ավանդական շեփորը մեջտեղ եկավ միայն սկզբնական շրջանում, աստիճանաբար ՀԱԿ-ի հանրահավաքներում շեփորային երաժշտությունն իր տեղը զիջեց ժամանակակից ռիթմերի՝ ՀԱԿ-ի այս կամ այն գործչի, հիմնականում Նիկոլ Փաշինյանի ձայնային ուղեկցությամբ, որով տեղեկանում էինք, թե՝ «այս հրապարակում դավաճան չկա, այս հրապարակում ուրացող կամ սրիկա չկա», «այս հրապարակը» Ազատության հրապարակն էր՝ ՀԱԿ-ի հանրահավաքով լեցուն: Ստանալով նման հենասյուն՝ Տեր-Պետրոսյանը, բնականաբար, առաջադրվեց 2008-ի նախագահական ընտրություններում... ՀԱԿ-ը եւ բոլոր նրանք, ովքեր կարծում էին, թե ՀԱԿ-ի հաղթանակն իրենց հաղթանակն է, հետեւաբար ՀԱԿ-ի «հավերժ պայքարը» իրենց պայքարն է, հայտնվեցին փողոցում, մարդիկ, ի տարբերություն ՀԱԿ-ի առաջնորդների, կոնկրետ Տեր-Պետրոսյանի, ուղղակի տուն չէին գնում: Նախագահական ընտրություններն ավարտվեցին... կրակոցներով, ինչպես ՀԱԿ-ի առաջնորդների ղեկավարման տարիներին՝ 96-ին, բանակը մտավ մայրաքաղաք, այնպես էլ ՀԱԿ-ի ընդդիմության տարիներից 2008-ին բանակը մտավ մայրաքաղաք, այն տարբերությամբ, որ վերջին անգամ բանակը կրակեց, զոհվեցին մարդիկ... Տեր-Պետրոսյանը իր տանն էր մինչ ողբերգությունը, դրանից առաջ այդ մասին անշուշտ իմանալով, նա որեւէ հայտարարության, կոչհորդորի անհրաժեշտությունը չտեսավ եւ չբացեց իր տան դռներն անգամ Վեհափառի առջեւ: Անազատության մեջ հայտնվեցին քաղաքացիներ իրենց քաղաքական հայացքների համար. ստեղծման առաջին իսկ տարում ՀԱԿ-ը եւ դրա պայքարը տվեցին 10 զոհ, բազմաթիվ կալանավորվածներ, պառակտման եզրին կանգնած պետական համակարգ, վախեցած հասարակություն եւ արտակարգ դրության մի քանի հայտարարված օրեր Հայաստանում:




Նախագահական ընտրություններից հետո ՀԱԿ-ը, անձամբ Տեր-Պետրոսյանը հայտարարեցին, որ իրենք անճկուն են, որ պայքարը «ավազակապետության» դեմ նոր թափ է ստանում, որ շուտով ամեն ինչ ավարտվելու է, որ հաղթելու է... բնականաբար ժողովուրդը: ՀԱԿ-ն էլի ունենում էր բազմամարդ հանրահավաքներ, բայց Ազատության հրապարակը դաշինքի առջեւ փակվեց...

Եվ բացվեց՝ ներկայացվելով որպես գալիք, սպասված հաղթանակի առաջին քայլ: Տեր-Պետրոսյանը հանրահավաքի մասնակիցների անդադար ու համառ բղավոցներին, թե՝ հիմա, հիմա... արձագանքեց՝ սկսել ա..., ի՞նչը, «ավազակապետության դեմ պայքարի վճռորոշ փուլը», Լեւոն Զուրաբյանը հռչակագիր ընդունեց՝ «համընդհանուր բացօթյա քվեարկությամբ» սկսելու գործընթաց Սերժ Սարգսյանի իմպիչմենտին հասնելու ուղղությամբ: Չգիտենք, գործընթացը սկսվեց, թե ոչ, բայց արագորեն մոռացվեց. ՀԱԿ-ը մասնակցեց «ավազակապետության» կազմակերպած խորհրդարանական ընտրություններին, 7 տեղ ստացավ խորհրդարանում՝ խոստանալով չհեռանալ փողոցից, որտեղ վաղուց արդեն մասսայականություն չէր վայելում... ՀԱԿ-ի հանրահավաքներն էլ շուտով մոռացվեցին: Մինչ այդ ՀԱԿ-ը, Տեր-Պետրոսյանի առնվազն գիտությամբ, երկխոսության սեղանի մոտ նստեց «ավազակապետության» հետ, եւ անձամբ Տեր-Պետրոսյանը, անտեսելով հարցի շուրջը ՀԱԿ-ում կոնսենսուսի բացակայությունը, «խորհելու նյութ» տվեց ԲՀԿ-ին: Հենց այդ ժամանակ սկսվեց ՀԱԿ-ի փլուզման գործընթացը, դաշինքը լքեց Արամ Զավենի Սարգսյանը իր «Հանրապետություն» կուսակցությունով, որը ՀԱԿ-ի առանցքային դեմքերից էր, մի շարք կուսակցություններ եւ հասարակական խմբեր, ակտիվիստներ, որոնք սկսեցին հրապարակայնորեն արտահայտել իրենց չհամաձայնությունը ՀԱԿ-ի որդեգրած ռազմավարությանը, նոր մարտավարությանը, գործելակերպին, իսկ «այս ամենը» համակարգող Զուրաբյանը շարունակ պնդում էր, թե «ՀԱԿ-ն ամուր է, քան երբեւէ»:

Այդ ընթացքում «ավազակապետությունը» էլ ավելի հիմնավորվեց խորհրդարանում, Գագիկ Ծառուկյանը մտածեց-մտածեց ու որոշում կայացրեց, որ չի մասնակցելու նախագահական ընտրություններին եւ ոչ մեկին էլ չի սատարելու, որից անմիջապես հետո Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ ինքն արդեն 68 տարեկան է, եւ ժամանակն է ճանապարհը զիջելու երիտասարդներին: Վերջիններից Հրանտ Բագրատյանը, սառեցնելով հարաբերությունները ՀԱԿ-ի հետ, սեփական «Ազատություն» հրապարակում... ներողություն՝ կուսակցությունում, համագումար անցկացրեց, որտեղ էլ առաջադրվեց նախագահի թեկնածու, մի ընտրություններում, որոնց, ըստ ՀԱԿ-ի համակարգող Զուրաբյանի, ՀԱԿ-ը չի մասնակցելու եւ բոյկոտելու է: Այս համապատկերում, կրկին հայտարարություն արեց Տեր-Պետրոսյանը, մասնավորաբար նշելով. «Թաքցնելու բան չկա: Կոնգրեսի ներսում իսկապես խմորումներ կան: Որոշ ուժեր եւ անհատներ դե յուրե, իսկ ոմանք դե ֆակտո դուրս են եկել դաշինքից: Ես սա շատ բնական եմ համարում, որովհետեւ փոխվել են նրանց մոտեցումներն ու ակնկալիքները, փոխվել է քաղաքական օրակարգը, փոխվել են մեր առջեւ կանգնած խնդիրները, ինչը կազմակերպական նոր լուծումներ է պահանջում: Հասկանալի է, որ Կոնգրեսն այլեւս չի կարող պահպանվել նույն կազմով ու կառուցվածքով, ինչպիսին հանդես է եկել նախորդ հինգ տարիների ընթացքում: Որպես տարբեր քաղաքական ուժերի եւ անկուսակցականների հոծ զանգվածի դաշինք, Կոնգրեսը լիովին կատարել է ավազակապետության դեմ անհաշտ պայքարի ելած ընդդիմադիր շարժման իր անուրանալի դերը, բայց այդ դերակատարությունը շարունակելու եւ պայքարը մինչեւ հաղթական ավարտ հասցնելու համար կարիք ունի լուրջ ինստիտուցիոնալ փոփոխության: ...Ուստի, նկատի ունենալով առաջիկա տարիներին քաղաքական զարգացումների միտումները, կարծում եմ, արդեն ժամանակն է, որ Կոնգրեսը քաղաքական զանազան ուժերի ու անկուսակցականների ազատ դաշինքից վերածվի մեկ միասնական կուսակցության»: Փաստորեն ՀԱԿ-ն արդեն փլուզվեց, ու նկատենք՝ ներսում առկա խմորումների պատճառով: Ինչ վերաբերում է դաշինքի վերակազմակերպմանը՝ որպես կուսակցության, ապա, օրինակ, Հրանտ Բագրատյանն ասել է. «Է, թող ստեղծեն, ինձ ի՞նչ»: ՍԴՀԿ-ի այդ թեւից հնչել է հայտարարություն, որ ՍԴՀԿ-ն երբեք մաս չի կազմի ՀԱԿ կուսակցությանը, նույն տրամադրություններն են Ստեփան Դեմիրճյանի գլխավորած ՀԺԿ-ում, Նիկոլ Փաշինյանն իր հերթին, սեփական կուսակցությունը ստեղծելու հովերով տարված, այսօր կոչ է արել բոյկոտել գալիք ընտրությունները, որոնց մասնակցում է, հիշեցնենք, ոչ վաղ անցյալի ՀԱԿ-ի հենասյուներից Հրանտ Բագրատյանը, որը հակառակ կոչն է անում «ՀՀ պարտ քաղաքացիներին»: Ընդ որում, Նիկոլը «ստեղծված աննախադեպ իրավիճակի համար» մեղադրում է ոչ միայն «նախագահի նստավայրը զավթած մարդուն», այլեւ իրենց՝ ընդդիմությանը... «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության առաջնորդ Պետրոս Մակեյանն էլ նշում է, թե «փորձելու ենք պահել Կոնգրես» ասվածը, կտրականապես դեմ լինելով ՀԱԿ-ի «բազայի վրա» կուսակցություն ստեղծելու առաջարկին, նկատենք, Տեր-Պետրոսյանի առաջարկին, եւ հարց է առաջանում՝ եթե Կոնգրեսում այսօր ներառված «կարեւոր կուսակցությունները», նրանք, ովքեր այսօր դեռ Կոնգրեսում են, դեմ են կուսակցություն դառնալու տերպետրոսյանական առաջարկին, ապա ո՞ւմ է սա ձեռնտու: ՀՀՇ նախագահ Արամ Մանուկյանը ողջունել է ՀԱԿ-ից կուսակցություն ստեղծելու առաջարկը՝ ընդգծելով, որ ինքը կուզենար, որ ՀՀՇ-ն այդ գործընթացում չլուծարվեր, այլ վերակազմավորվեր: Հետեւաբար ՀԱԿ-ից կուսակցություն՝ նշանակում է ՀՀՇ-ի վերակազմավորում. բնականաբար, այս առաջարկը ձեռնտու է միայն Արամ Մանուկյանին՝ որպես Կոնգրեսի ներսում մնացած կուսակցապետի:

Եվ վերջապես, եթե ՀԱԿ-ն իր ստեղծմամբ կոչված էր լուծելու երկու խնդիր, այն է՝ ապահովել Տեր-Պետրոսյանի վերադարձը քաղաքականություն եւ հետագայում ընդլայնել, վերակազմավորել ՀՀՇ-ն, ապա ՀԱԿ-ն այս խնդիրները լուծեց եւ կարծես թե լուծում է, սակայն եթե ՀԱԿ-ն ուներ նպատակ՝ «վերջ տալու ավազակապետությանն ու քրեաօլիգարխիկ համակարգին», ապա նկատենք, որ «ավազակապետությունը» դեռ կա, այ ՀԱԿ-ը՝ արդեն ոչ: Իսկ թե էլ ի՞նչ խնդիրներ լուծեց կամ առաջացրեց ՀԱԿ-ն իր 5-6 տարվա գոյության ընթացքում, թողնում ենք ձեր եզրակացությանը, այսպես ասած՝ որպես «խորհելու նյութ»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԴԵՄ ՔՎԵԱՐԿԵԼ... ԽՂՃՈՎ

## Դաշնակցություն. Գնացե՛ք ընտրության, բայց ձայն մի՛ տվեք իշխանություններին

**Հայ հեղափոխական դաշնակցության գերագույն մարմինը երեկ հայտարարություն է տարածել, որտեղ եւս մեկ անգամ նշել է, թե ինչու ՀՅԴ-ն չմասնակցեց ընտրություններին: «Միասնական քաղաքական օրակարգ չձեւավորվեց եւ ընդդիմադիր միասնական թեկնածու ունենալու ջանքերն արդյունքն չտվեցին», հայտարարել են նրանք: Դաշնակցականներն անիմաստ համարեցին մասնակցել մի մրցարշավի, որի ելքը կանխորոշված է, իսկ նախընտրական ընթացքն արդեն սպասվող ընտրությունների «որակի» ապացույցն է:**

**«Բայց կյանքը փետրվարի 18-ից հետո շարունակվելու է, ժողովրդին հուզող խնդիրները մնալու են օրակարգում»: Դաշնակցականները հորդորել են գնալ ընտրության, թույլ չտալ, որ վերջնականապես վարկաբեկվի այդ ինստիտուտն ու ձայնն օգտագործվի իշխանության վերարտադրման համար:**

**«Իբրեւ ընդդիմադիր քաղաքական ուժ՝ մենք կոչ ենք անում՝ գնալ ընտրության, ձայն չտալ իշխանության թեկնածուին, քվեարկել ձեր խղճով եւ ցանկությամբ կամ քվեաթերթիկն անվավեր դարձնել»: Բավական հետաքրքրական է հատկապես կոչի այս վերջին հատվածը, երբ Գերագույն մարմինը կոչ է անում քվեարկել խղճով, բայց ձայն չտալ իշխանություններին՝ անտրամաբանական եւ հակասական: Իսկ եթե քաղաքացին հավատում է, որ Սերժ Սարգսյանն ապահով Հայաստան է բերելու եւ իր խղճով ցանկանում է նրա օգտին քվեարկե՞լ: Սա միակ հակասությունը չէ: Որոշ համայնքների դաշնակցական ղեկավարներ հայտարարել են, որ սատարում են ՀՀԿ թեկնածուին: Օրինակ, Արագածոտնի մարզի Ուշի համայնքի դաշնակցական ղեկավար Հոմբերտ Աթայանը կամ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքի ղեկավար Գեւորգ Թովմասյանը լրատվամիջոցներին բազմիցս ասել են, որ ընտրելու են գործող նախագահին:**

**Հ. Հ.**

## Alcatel OT 810D՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում




**ՎիվաՍել-ՄՏՍ-ը ներկայացնում է 2 SIM քարտի հնարավորությամբ եւ QWERTY ստեղնաշարով նորաոճ Alcatel OT 810D հեռախոսը՝ հատուկ ժամանակակից կանանց համար:**

**Հեռախոսն արժե 39900 դրամ եւ կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ: Alcatel OT 810D-ի առաջին SIM քարտի բնիկը համատեղելի է միայն ՎիվաՍել-ՄՏՍ-ի, իսկ երկրորդը՝ ցանկացած օպերատորի քարտերի հետ:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

# Հրաժարականի որոշումը պարտադրվե՞լ է Հռոմի պապին

## Թե՞ դա հետեւանքն է հոգեւոր ու մարմնական առողջության վատթարացման

Փետրվարի 11-ին կարդինալների ժողովում Հռոմի Բենեդիկտոս 16-րդ պապը անսպասելիորեն հայտարարեց հովվապետի լիազորությունները վայր դնելու պատրաստակամության մասին՝ պատճառաբանելով, թե իր հոգեւոր եւ մարմնական առողջությունն այլեւս թույլ չի տալիս շարունակել եկեղեցուն ծառայելու առաքելությունը:

Բենեդիկտոս պապի որոշումը ցնցեց Վատիկանը: Աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները դրան որպես թեժ լուր արձագանքեցին՝ ընդհատելով հաղորդումները: Դա ենթադրելի է, որովհետեւ որոշումը անակնկալի է բերել ողջ աշխարհին: Պարզապես զարմանալի են որոշման մասին միջազգային լրատվամիջոցներում շրջանառվող ենթադրությունները: Ըստ ենթադրությունների, ինչպես Վատիկանի պաշտոնաթերթ L´Osservatore Romano-ն է արել, պապը հրաժարականի որոշում էր կայացրել անցյալ տարվա մարտի 23-29-ին Մեքսիկա եւ Կուբա այցելության ժամանակ: Մեկ այլ ենթադրության համաձայն, որի մասին հաղորդում է BBC-ն, պապն ամեն անգամ Գերմանիա ուղեւորվելիս, այնտեղ իր մերձավորներին գանգատվել է, թե ոչ մեկին չվստահելու պատճառով իրեն միայնակ է զգում Վատիկանում:

Տարածվեցին նաեւ պապի սրտային անբավարարվածության, նրա դեմ վերջին մեկ տարում պատրաստվող ահաբեկչության մասին ենթադրությունները: Դրանցից թերեւս պետք է առանձնացնել Բենեդիկտոս 16-րդի արմատական դիրքորոշումն ու մահմեդականներին եւ հրեաներին «բացասական» մոտեցումը: Չնայած այս կարգի մոտեցումների առկայության լուրերին, Իսրայելի գլխավոր ռաբբին, անդրադառնալով հրաժարականի որոշմանը, գահակալության տարիներին կրոնների մերձեցմանը բերած նպաստի համար իր երախտագիտությունն է հայտնել Բենեդիկտոս պապին: Կ. Պոլսո հույն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն փետրվարի 11-ին հրաժարականի որոշումը «Հյուրիեթին» մեկնաբանելիս, հավելել էր ռաբբիին, ընդգծելով, թե Բենեդիկտոս պապը ոչ միայն նպաստել է քրիստոնեական եւ իսլամական աշխարհների երկխոսությանը, այլեւ ամրապնդել է միջեկեղեցական եղբայրությունը: Ավելին, Բարդուղիմեոս պատրիարքի վկայությամբ, պապը ձգտում էր, հաղթահարելով ուղղափառների եւ կաթոլիկների միջեւ դարերի վաղեմությամբ տարաձայնությունները, «միավորել Կ. Պոլսո եւ Հռոմի եկեղեցիները»:



Եթե Հռոմի պապը, որպես արմատական քրիստոնյա, բացասական մոտեցում ունենար իսլամական աշխարհի նկատմամբ, ապա մահմեդական հոգեւորականներն առնվազն կողջունեին գահակալությունից հրաժարվելու նրա որոշումը: Որքան էլ տարօրինակ թվա, այն, ինչից զերծ են մնացել մահմեդական հոգեւորականները, արել է Լիբանանում մարոնիտների պատրիարքի փոխանորդ Փոլ Սայահը: Թուրքական «Անադոլու» կիսապաշտոնական գործակալության հարցին ի պատասխան, փոխանորդ Սայահն ասել է. «Հրաժարականի որոշումը չի ազդի կաթոլիկ եկեղեցու վրա: Բենեդիկտոս 16-րդ պապն այլեւս շատ է ծերացել, առողջական վիճակի վատթարացումը նրան զրկում էր աշխատելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով էլ նախընտրեց հրաժարական տալ»:

Ակամա հարց է ծագում, ո՞ւմ տրամադրություններն է արտահայտում մարոնիտների պատրիարքի փոխանորդը: Մինչ հարցին պատասխանելը, անդրադառնանք Եվրոմիության առաջնակարգ երկրների ղեկավարության արձագանքին: Նրանցից Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հրաժարականի որոշումը գնահատելիս ասել է, որ մեծ հարգանքով է վերաբերում Բենեդիկտոս պապի ընդունած այս «դժվարին» որոշմանը: Մոտավորապես նույն խոսքերով է հրաժարականի որոշումը գնահատել նաեւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը: Անգլիայի վարչապետ Դեւիդ Կամերոնը նշել է. «Միլիոնավոր քրիստոնյաներ կարոտելու են իրենց հոգեւոր առաջնորդին: Բենեդիկտոս պապը ջանք չի խնայել Վատիկանի հետ անգլիացիների հարաբերություններն ամրապնդելու համար»: Իսկ Իտալիայի նախագահ Ջորջիո Նապոլիտանոն ավելացրել է. «Պապի որոշումը շատ հանդուգն է: Վերջին շրջանում ականատես էինք լինում նրա կրած դժվարություններին»:

Շարադրված կարծիքները ամփոփելու դեպքում ակնհայտ կդառնա Բենեդիկտոս 16-րդ պապի հրաժարականի առնչությամբ եվրոպական երկրների ղեկավարության գոհունակությունը: Հրաժարականը ամենեւին էլ պայմանավորված չէ իսլամական աշխարհի նկատմամբ իբր պապի արմատականությունից բխող, այսպես կոչված, բացասական մոտեցմամբ, որովհետեւ այդ մոտեցումը հրաժարականն արդարացնելու համար կամայականորեն կաթոլիկ հովվապետին են վերագրում:

Դրանում համոզվելու համար կարելի է հայացք գցել դեկտեմբերի 25-ին Սուրբ Ծննդյան տոնի առթիվ պապի ունեցած ելույթին. «Աղոթում ենք, որ իսրայելցիներն ու պաղեստինցիները կարողանան խաղաղ ապրել միասնական աստծո հովանու ներքո եւ ազատ պայմաններում: Մենք աղոթում ենք նաեւ Լիբանանի, Սիրիայի, Իրաքի խաղաղության համար»:

Այս ելույթը մահմեդականների նկատմամբ ոչ թե պապի բացասական մոտեցումը, այլ հոգատարությունն է արտահայտում: Խնդիրը, սակայն, Բենեդիկտոս 16-րդի հոգատարությունը չէ, այլ հոգատարության առաջացրած հակազդեցությունը: Համենայն դեպս, եթե ոչ իսրայելցիները, ապա Իսրայելը պաղեստինցիների հետ միասնական աստծո հովանու ներքո խաղաղ ապրելու պատրաստակամություն չունի: Ինչ վերաբերում է Լիբանանի, Սիրիայի, Իրաքի խաղաղությանը, ապա դրան էլ կտրականապես հակադրվում է Արեւմուտքը, որովհետեւ պապի խաղաղության ցանկությունը միանգամայն հակասում է նշված երկրները մասնատելու, ավելին, ներքաղաքական անկայունությունը իբրեւ մասնատման միջոց օգտագործելու Արեւմուտքի ծրագրերին: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Հռոմի պապի հրաժարական տալու որոշմանը գոհունակությամբ արձագանքելիս, Լիբանանի մարոնիտների պատրիարքի փոխանորդ Սայահը տուրք է տվել Արեւմուտքի նկրտումներին:

Գալով հրաժարականի շուրջը տարաբնույթ ենթադրություններով աշխարհն ապակողմնորոշող միջազգային առաջնակարգ լրատվամիջոցներին, դրանք էլ ուղղորդվելու հանգամանքով մեծ տերություններին ընդառաջելու պարտավորություն ունեն: Ինչպես երեւում է, այս պարտավորությունը թեկուզ մասնակի տարածվում է նաեւ Վատիկանի վրա: Ի վերջո, Վատիկանը պետության կարգավիճակով միջազգային հանրության մաս է կազմում, իսկ մեծ տերությունները, բացի առաջնակարգ լրատվամիջոցներից, ուղղորդում են նաեւ այս հանրությանը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Ձերբակալություններ ձիու մսի սկանդալի գործով

Մեծ Բրիտանիայում 3 մարդ է ձերբակալվել Եվրոպայում տավարի մսի արտադրանքների մթերային ցանցերում ձիու մսի հայտնաբերման հետ կապված սկանդալի գործով:

Ձերբակալությունները կատարվել են բրիտանական մսի երկու ձեռնարկություններում, որտեղ այս շաբաթ ավելի վաղ անցկացվել էին խուզարկություններ եւ որոնց աշխատանքը դադարեցվել էր: Երկու ընկերություններն էլ մերժել էին իրենց հասցեագրված բոլոր մեղադրանքները, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Չնայած դրան, գործը քննող խուզարկուները ձերբակալել են Ուելսի արեւմուտքում գտնվող Աբերիստուիթ քաղաքի մսի վերամշակման գործարանում աշխատող երկու կասկածյալների: Երրորդ ձերբակալությունը կատարվել է Անգլիայի հյուսիսում՝ Ուեսթյորքշիրի կոմսության Թոդմորդեն քաղաքի սպանդանոցում:



Իրավապահները նշում են, որ մսի հետ կապված խարդախության կասկածանքով ձերբակալված անձանց տարիքը տատանվում է 42-ից մինչեւ 64-ի սահմաններում: Նրանց անուններն ու պաշտոնները չեն հրապարակվում, սակայն բրիտանական մամուլի տվյալներով, մեկը Ուելսում գտնվող ձեռնարկության սեփականատերն է:

Ոստիկանությունում հայտարարել են, որ սպանդանոցի ղեկավարները «կասկածվում են տավարի միս մթերելիս ձիու միս օգտագործելու մեջ»: Արտադրանքը հետագայում մակնշում էր որպես տավարի միս:

RFI ռադիոկայանը հավելում է, որ տվյալ սկանդալից զերծ չի մնացել նաեւ Ֆրանսիան, որտեղ համանման խարդախության մեջ մեղադրվում է «Սպանգերո» ընկերությունը: Ենթադրվում է, որ ձիու միսը անօրինական կերպով բերվել է Ռումինիայից:

Եվրոպայում «մսի սկանդալը» պայթեց մի քանի օր առաջ, երբ ԵՄ տարբեր երկրների սուպերմարկետների վաճառասեղաններին տավարի մսից պատրաստված մթերքների մեջ հայտնաբերվեց ձիու միս:

Նման դեպքեր արդեն նկատվել են Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Իռլանդիայում, Իսպանիայում, Կիպրոսում, Լյուքսեմբուրգում, Ռումինիայում, Ֆրանսիայում եւ Շվեդիայում: Ներկայումս գործի քննությանը մասնակցում է նաեւ Եվրոպոլը:

Մեծ Բրիտանիայի սուպերմարկետների ցանցերը շարունակում են վաճառքից հանել կասկածելի նորանոր մսամթերքներ:

# Փախստականների ճամբար Թուրքիայում սիրիացի քրիստոնյաների համար

Այդ մասին, ըստ թուրքական լրատվամիջոցների, գրել է «Նյու Յորք թայմսը»: Ամերիկյան թերթի վկայությամբ՝ հարկ լինելու դեպքում Թուրքիայի տարածքում բացվելու է նոր ճամբար, որը նախատեսվում է ասորիների գլխավորությամբ Սիրիայի քրիստոնյա բոլոր փախստականների համար: Որքան էլ քրիստոնյաները ջանան չեզոքություն պահպանել, նրանք հայտնվել են «Ազատ Սիրիայի բանակի» հետ քրդերի բախումների կիզակետում: Նկատի առնելով վերահաս վտանգը, «Նյու Յորք թայմսը» դիմել է թուրք պաշտոնատար անձանց, որոնք էլ ասել են, որ Անկարան պատրաստ է փախստականների հատուկ ճամբար բացել քրիստոնյաների համար եւ ապահովել վերջիններիս կեցությունը:

Ամերիկյան թերթի հրապարակումից պարզվում է, որ ասորի փախստականներն արդեն սկսել են ապաստանել Թուրքիայում: Սակայն սիրիացի արաբներին հատկացված ճամբարների փոխարեն նրանք տեղավորվել են Մարդին-Միդիաթ շրջանի ասորական եկեղեցիներում ու վանքերում, քանի որ վախենում են:

Ըստ երեւույթին խնդիրը արաբները չեն, այլ «Ազատ Սիրիայի բանակի» վրեժխնդրությունը: Համենայն դեպս, վարչապետ Էրդողանի գրասենյակից հավաստիացրել են Ասորական միությունների ֆեդերացիային, որ անհրաժեշտության դեպքում կտեղակայվեն նոր ճամբարներ ինչպես ասորիների, այնպես էլ Սիրիայի քրիստոնյա մյուս խմբավորումների համար սահմանակից Հաթայ նահանգի տարածքում: Ենթադրությունների համաձայն, եթե Ռաս ալ Այնը անցնի ընդդիմադիր ուժերի ձեռքը, ապա Թուրքիա կապաստանի առնվազն 50 հազար քրիստոնյա:

Հ. Չ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

# Սոս Սարգսյանը պատմում է դաժան մանկության եւ իր նոր գրքի մասին

«1942 թվականին հորս տարան ռազմաճակատ: Յոթ երեխայի տեր մարդուն... Տեսա՞ք: Բարեւ, ընկեր Ստալին, յոթս էլ քեզ առողջություն ենք ցանկանում: Բա՛հ»: Ահա այս տողերով է սկսում Սոս Սարգսյանի նոր «Ոտնամաններ» գիրքը:

Գրքում ամփոփված են հեղինակի մանկության հիշողությունները Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիների, հասկապես՝ անթերի ոտնամաններ ունենալու եւ ոտքերը չսառչելու երազանքի մասին:

Գրքում Սոս Սարգսյանն իրեն նկարագրում է հետեւյալ կերպ. «Ես տասներկու տարեկան, ոսկորոտ-մոսկորոտ, բարակ վզով, վեր ձգված լակոտ եմ»:




Իսկ գիրքը կարդալիս միշտ ժպիտն է ուղեկցվում, սակայն միեւնույն պահին նկարագրվում է դաժան կյանք: Վարպետն այնպիսի նուրբ հումորով է ներկայացնում իր դաժան կյանքը, որ չգիտես «Ժպտաս, թե՞ լաս»:

ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը վատառողջ լինելով հանդերձ չմերժեց «**Ազգին**» եւ զրուցեց գրքի մասին: Ասաց, որ գիրքն ստեղծվեց հանկարծակի. «Ես զգացի, որ բավականին գրքեր ունեմ գրված, սակայն իմ անձնական կյանքի մասին ոչինչ չեմ գրել, եւ գիրքն ինքն իրեն ծնվեց»:

Վարպետը «Ոտնամանները» լուրջ գործ չի համարում, բայց ինչպես ասաց՝ մարդիկ հավանում են, ինքն էլ ուրախանում է:

Ինչպես գրքում է գրված, հոր գնալուց հետո Սոս Սարգսյանի համար աշխարհը խոնավ ու թաց էր: Կարգին ոտնաման չունենալու պատճառով է, որ իրեն թվում է, թե անձրեւն ի հեճուկս իրեն է թափվում, եւ իր անձնական թշնամին է՝ դաժան ու անխիղճ, որը ցանկանում է իրեն աշխարհից վերացնել:

Ս. Սարգսյան գրքում խորհուրդ է տալիս. «Գիտե՞ք, մեկ-մեկ լաց լինելը, մանավանդ երբ վկա չկա, քաղցր բան է, փորձեք... Հավեսի համար:»:

«Ազգի» հետ զրույցում Սոս Սարգսյանը կես-կատակ, կես-լուրջ ասաց. «Գրքի վերջում գրել եմ, որ ոչ մի բան էլ չեմ ցանկանում ասել իմ ընթերցողին: Ինձ տանջող բաներ էին, գուցե էս գրվածքով ազատվեմ դրանցից: Դուռս խուփ անելու ժամանակն է, մարդու սիրտն էլ չի փոխվում, բնավորությունը, մտածելակերպը փոխվում է, սիրտը՝ ոչ: Իհարկե, էս մեր անձեւ ժամանակները, «անժամանակ» ժամանակները, չարժե կյանքի խորքերը գնալ, ինչ-որ շերտեր փորել, իմաստները գտնել: Ինչի՞ համար, ո՞ւմ համար... դրա պատառողը չկա... էդ անողն էլ ես չեմ, իսկական գրողներ կան: Ես հավեսի համար, եթե շատ անկեղծ լինեմ, հավեսի համար գրեցի: Ես դերասան եմ՝ հավեսի համար եմ խաղում, հավեսի համար բեմադրություններ եմ անում, հավեսի համար շախմատ խաղում... Ձեզ էլ եմ խորհուրդ տալիս՝ ինչ-որ անում եք, հավեսով արեք, մեծ հավեսով.. մի բան դուրս կգա:»:

Իսկ ավելի լուրջ՝ ասաց. «Գրքում ներկայացրել եմ, թե մարդը որքան ծանր, դժվար օրեր է անցել եւ հաղթահարել, թե ինչպես հիմա չի տառապում, բայց ո՞նց չեմ տառապում, տառապում եմ, իմ կյանքն է եղել, չէ՞: Գիրքը դիմանալու, խիզախելու մասին է»:

Սոս Սարգսյանը մտորելով դառը մանկության մասին պատմեց մի պատմություն.

«Երբ դպրոցական էի, Մոսկվայից, Խարկովից, Լենինգրադից մի խումբ նոր աշակերտներ եկան: Հրեշտակներ էին, մեկը մեկից սիրուն, գրավիչ, հմայիչ, խելացի... դե ռուս կանանցից ավելի գեղեցիկ կին կա՞ աշխարհում: Այդ խմբի միջի տղաները քիչ էին, եղածներն էլ մի առանձնապես տեսք չունեին, իսկ մենք բարձրահասակ, հմայիչ, պինդ, լոռեցի տղաներ էինք: Բոլոր տղաները սիրահարված էին այդ աղջիկներին եւ դրանցից ամենավատ հագնվածը ես էի, ինչպես նաեւ բոբիկ: Տղաներն ամեն ինչ անում էին, որպեսզի գրավեին աղջիկներին, իսկ ես համեստորեն լռում էի:

Հետո բարակ երկաթալար ճարեցի, կոշիկիս ներբանները կապեցի ոտնաթաթերիս: Չափազանց տգեղ բան ստացվեց եւ գնալով դպրոց՝ արագ ոտքերս թաքցնում էի նստարանի տակ... Սակայն օրեր անց քեռիս տրեխներ է ինձ նվիրում:»:

Վարպետը հիշեց նաեւ, որ տարիներ առաջ իրենց Իսահակյան փողոցի վրա գտնվող տան դուռը թակում է մի չսափրված, «կյաժ» մազերով, միջահասակ, նիհար մարդ, որը վատ հագնված եւ սեւ «կալոշների» մեջ բոբիկ ոտներով էր: Տեսնելով այդ, հանկարծ անշնորհք ծիծաղս բռնում է եւ հարցնում եմ՝ այ մարդ, դու որտեղի՞ց ես, իմ մանկությունի՞ց: Հանում եւ տալիս եմ իմ ոտնամանները եւ մի զույգ գուլպա:

Վարպետն ունենալով դառը մանկություն, այսօրվա երիտասարդներին խորհուրդ տվեց. «Այն կյանքը, որ մենք ենք տեսել, մոտավորապես հարյուր անգամ ավելի ծանր էր, դաժան, քան՝ այսօրվանը: Չեմ կարծում, որ այսօր առանց ոտնաման մարդ լինի: Մենք՝ հին սերունդը, հաղթահարել է ե՛ւ սով, ե՛ւ մերկություն՝ առանց վերարկու եւ գլխարկ: Այսօրվա կյանքը չի կարելի նույնիսկ համեմատել այդ տարիների հետ: Այդ հոգսերը չունենալով հիմիկվա սերունդը պետք է զբաղվի պետականաշինությամբ, հասարակության կազմավորմամբ»:

Պատրաստեց՝
ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ

## 2011 թվականի ցուցանիշներով ՀՊՄՀ գիտական գրադարանը բուհական համակարգում առաջինն է

Հայաստանի ազգային գրադարանը հրատարակել է «Հայաստանի գրադարանները. 2011» գիրքը: Այն ամփոփում է Հայաստանի գրադարանային համակարգի 2011 թվականի վիճակագրական տվյալները:




# Պետական մանկավարժական համալսարան

Գրքում առանձին բաժնով ներկայացվել են հանրապետության 16 պետական բուհերի 2011 թվականի ցուցանիշները:

Վիճակագրական ցուցանիշներով Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական գրադարանը զբաղեցնում է առաջին հորիզոնականը: Գրադարանային հիմնական ցուցանիշների համաձայն՝ 2011 թվականին գրադարանն ունեցել է 16.596 ընթերցող եւ տարվա ընթացքում ապահովել է տպագիր միավորի 2.206.622 տացք (շրջանառություն): Երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Երեւանի պետական համալսարանի Սարգիս եւ Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը (15.000 ընթերցող, 1.900.610 տացք): Երրորդ հորիզոնականում է Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (5650 ընթերցող, 185.467 տացք):

Վիճակագրության համաձայն՝ ՀՊՄՀ գիտական գրադարանը Հայաստանի հանրային բնույթի գրադարանների ցուցանիշների համեմատությամբ նույնպես առաջնային տեղ է զբաղեցնում: Եթե ընթերցողների թվով զիջում է Հայաստանի ազգային գրադարանին (ունի 26.710 ընթերցող) եւ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանին (18.850 ընթերցող), ապա նրանց գերազանցում է տպագիր արտադրանքի տացքով: Հայաստանի ազգային գրադարանի տացքը գերազանցում է 622.811 միավորով, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տացքը՝ 1.496.622 միավորով:

### mankavarzh.do.am Երեք տարի համացանցում

Փետրվարի 12-ին լրացավ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական գրադարանի mankavarzh.do.am կայքի երեք տարին: Երեք տարի առաջ այն մուտք գործեց համացանց:

Անցած 1095 օրերին կայքը օր օրի ներկայացրել է թե՛ գրադարանի, թե՛ համալսարանի առօրյան: Կայքի բոլոր բաժինները («Մեր մասին», «Գրապահոց», «Միջոցառումներ», «Հաշվետվություն», «Պատկերասրահ», «Շտեմարան», «Ողջույն») հագեցած են բազմաթիվ նյութերով ու լուսանկարներով: «Գրապահոց» բաժնում ներկայացվել ու ներկայացվում են գրադարան մտած նոր գրքերը: «Հաշվետվություն» բաժնում տեղադրված են գրադարանի 2009-2012 թվականների տեքստային եւ թվային հաշվետվությունները, գրադարանի հրատարակած «Հիշարժան տարեթվեր. 2010», «Հիշարժան տարեթվեր. 2011» գրքույկների էլեկտրոնային տարբերակները: «Պատկերասրահ» բաժինը ներկայացնում է այլեւայլ նյութեր: Այստեղ առաջին անգամ ներկայացվել են գրադարանում գտնվող 24 հնատիպ գրքերի տիտղոսաթերթերը, ներկայացվել են ՀՊՄՀ ռեկտորների լուսանկարները՝ կենսագրություններով, գրադարանի աշխատակիցների լուսանկարները, գրադարանի տնօրենների լուսանկարները՝ կենսագրականներով, գրադարանի հին եւ ներկա օրերին վերաբերող լուսանկարներ, ՀՊՄՀ «Խաչատուր Աբովյան», «Խաչատուր Աբովյանի անվան համալսարան» մեդալով պարգեւատրվածների ցուցակները: «Շտեմարան» բաժնում ներկայացված են Մեսրոպ Մաշտոցից մինչեւ Վահան Տերյան հայ բանաստեղծների ստեղծագործությունների էլեկտրոնային տարբերակները:

Հարուստ է կայքի «Գլխավոր էջ» բաժինը, որը հրատարակել է Մանկավարժական համալսարանին եւ գրադարանին վերաբերող ավելի քան 280 նյութ: Փաստորեն այս բաժինը նաեւ լրատվական էջի է վերածվել եւ արձագանքել է բոլոր համալսարանական նորություններին:

2011-ին, երբ դեռ չէր գործարկվել ՀՊՄՀ armspu.am կայքը, այստեղ են տեղադրվել ՀՊՄՀ-ում գործող ԲՈՀ-ի 020 խորհրդին ներկայացվող թեկնածուական եւ դոկտորական ատենախոսությունների հայտարարությունները, ինչպես նաեւ դոկտորական ատենախոսությունների սեղմագրերը:

Կատարված աշխատանքների արդյունքում կայքը ճանաչում է ձեռք բերել: Երեք տարվա ընթացքում 83 երկրից եւ 4 միջազգային կազմակերպություններից կայքն ունեցել է 89.383 մուտք կամ օրական միջինը 75 մուտք, նայվել է 347.573 էջ կամ օրական միջինը 317 էջ:

Ռեկորդային է եղել 2012 թվականի փետրվարի 16-ը, այդ օրը եղել է 314 մուտք: Մուտքերի թվով առաջին տեղում է Հայաստանը՝ 82.395 մուտք կամ ամբողջի 92.2 տոկոսը: Ըստ քանակի հաջորդ ինը տեղերում են Ռուսաստանը (2,7 տոկոս), ԱՄՆ-ը (2,2 տոկոս), Ֆրանսիան, Նիդեռլանդիան, Գերմանիան, Վրաստանը, Բելգիան, Լիբանանը, Կանադան (բոլորն էլ 0.2 տոկոս): Կայք մուտք են գործել նաեւ Թուրքիայի ներկայացուցիչները (79 անգամ, վերջին անգամ 2013-ի փետրվարի 4-ին), Ադրբեջանի ներկայացուցիչները (27 անգամ, վերջինը՝ 2013-ի փետրվարի 4-ին) Միջազգային կազմակերպություններից ամենամեծ մուտք եղել է Եվրոմիությունից (27 անգամ):

Կայքն ունի նաեւ «Հարցումներ» բաժին: Այստեղ երեք տարվա ընթացքում տրված հարցերին եղել են տարբեր պատասխաններ: Հարցերից առաջինին՝ «Որտե՞ղ եք սովորում», պատասխանել է 10.242 մարդ, որից 7917-ը՝ ՀՊՄՀ-ից (77 տոկոս), Հայաստանի ճարտարագիտական համալսարանից պատասխանել են 3 տոկոս հարցվողներ, այդքան դպրոցականներ են պատասխանել հարցին, երկուական տոկոս են կազմում Երեւանի պետական համալսարանի եւ ագրարային համալսարանի հարցվողները: «Ինչ գրականությունից եք օգտվում» հարցին պատասխանել է 6985 մարդ, որոնցից 4585-ը պատասխանել է, որ օգտվում է մասնագիտական գրականությունից, 1572-ը՝ պատմական գրականությունից, 698-ը՝ հայ եւ համաշխարհային գրականությունից: «Օգտվո՞ւմ եք մեր գրադարանից» հարցին պատասխանել է 7432 մարդ, որից «այո» պատասխան է տվել 6665 մարդ: «Կայքին ի՞նչ գնահատական կտաք» հարցին տրվել է 8365 պատասխան, որից 7967-ը կամ 95 տոկոսը՝ գերազանց եւ լավ:

2013 թվականի սկզբին գրադարանը ստեղծել է գրական ստուդիա: Արդեն կայքում հրատարակվել են ՀՊՄՀ ուսանողներ Հասմիկ Ջախալյանի, Սերվեն Խաչատրյանի, Անուշ Միքայելյանի, Հրաչյա-Ժորա Հակոբյանի, Լիլիթ Ավագյանի, Էվելինա Միրզոյանի բանաստեղծական շարքերը: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

2010, 2011, 2012 թվականներին գրադարանն անցկացրել է լավագույն ընթերցող մրցույթ: Այդ մրցույթների բոլոր նյութերը հրատարակվել են կայքում:

Անցած երեք տարիներին կայքն իր սահմաններում նպաստել է թե՛ գրադարանային աշխատանքի, թե՛ համալսարանական կյանքի միջազգայնացմանը:

ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ գիտական գրադարանի ավագ գրադարանավար

# Հայտնաբերվել է Լեոնարդոյի երկրորդ «Մոնա Լիզան»

Արվեստաբանների վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ Վերածնունդի դարաշրջանի մեծ վարպետ Լեոնարդո դա Վինչին ստեղծել է իրականում ոչ թե մեկ «Մոնա Լիզա», այլ՝ երկուսը: Պարզվել է, որ սխալ է երեք տասնամյակ գոյություն ունեցած այն ենթադրությունը, թե տվյալ նկարը եզակի է: Այդ մասին հաղորդում է «Դեյլի մեյլ» թերթը:

Այն գեղանկարը, որը մի քանի տասնամյակ համարում էին անհայտ վարպետի պատճենած «Մոնա Լիզա», իրականում պատկանում է հենց դա Վինչիին: Պատճեն համարվող «Այզելուորդյան Մոնա Լիզա» անվանումով նկարը հանվել է շվեյցարական բանկերից մեկի չհրկիզվող պահարանից եւ ենթարկվել նոր զննության: Պատկերված աղջիկը ակնհայտորեն ավելի ջահել է հանրահայտ «Մոնա Լիզայից»:



Շվեյցարացի արվեստաբանները ռադիոածխածնային հետազոտության շնորհիվ հերքել են այն ենթադրությունը, թե տվյալ ստեղծագործությունը աշխարհահռչակ գլուխգործոցից հետագայում կատարված պատճենն է: Պարզվել է, որ «Այզելուորդյան Մոնա Լիզան» ստեղծվել է 1410-1455 թթ. ընդգրկող ժամանակահատվածում, այսինքն՝ այն նկարից շատ ավելի վաղ, որը մինչեւ վերջերս համարվում էր բնօրինակ:

Հայտնի է, որ «Այզելուորդյան Մոնա Լիզա» անվանումը հեղինակային չէ: Ստեղծագործությունն այդպես է անվանակոչվել Լոնդոնի արվարձաններից մեկի պատվին, որտեղ հավաքորդ Հյու Բլեքերը պահպանում էր այն նախքան ամերիկացի գործընկերներից մեկին վաճառելը: Վերջինս իր կյանքի նշանակալի մասը օգտագործեց նկարի հեղինակին բացահայտելու նպատակով:

# Հայ շախմատիստներից լավագույնը կրկին Զավեն Անդրեասյանն է

Վերջնագիծը հատեց «Աերոֆլոտի» կայծակնային մրցաշարը, որի 275 մասնակիցների թվում էին հայաստանցի 10 շախմատիստներ: Մրցաշարն անցկացվեց շվեյցարական մրցակարգով, 9 տուրով, ընդ որում մրցակիցները միմյանց հետ մրցում էին 2 անգամ:

Ինչպես արագ շախմատի մրցաշարում, այնպես էլ կայծակնային խաղում հայ շախմատիստներից լավագույն արդյունքը ցույց տվեց գրոսմայստեր Զավեն Անդրեասյանը: Նա 18 հնարավորից վաստակած 12,5 միավորով զբաղեցրեց 15-րդ տեղը: Զավենը 10 պարտիա շահեց, 5-ն ավարտեց ոչ-ոքի, կրեց 3 պարտություն:




2-րդ ցուցանիշը ցույց տվեց գրոսմայստեր Տիգրան Լ. Պետրոսյանը, որը 11 միավորով գրավեց 59-րդ տեղը: ՖԻԴԵ-ի վարպետ Ռոբերտ Աղասարյանը 10,5 միավորով զբաղեցրեց 74-րդ տեղը: 10-ական միավորով համապատասխանաբար 81-րդ եւ 99-րդ տեղերը զբաղեցրին Հովհաննես Դանիելյանն ու Դավիթ Գեւորգյանը: Մեր մյուս շախմատիստների ցուցանիշներն այսպիսին են. 125. Տիգրան Քոթանջյան՝ 9, 164. Հովհաննես Գաբուզյան՝ 8, 186. Վահագն Խաչատրյան՝ 7,5, 264. Արթուր Ղարագյոզյան՝ 3,5, 267. Տիգրան Ս. Պետրոսյան՝ 2:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի գրոսմայստեր Յան Նեպոմնյաչչին, որը վաստակեց 15,5 միավոր ու արժանացավ 10 հազար դոլար պարգեւավճարի: 2-րդ տեղը 14,5 միավորով գրավեց ռուսաստանցի մեկ այլ գրոսմայստեր՝ Պյոտր Սվիդլերը: Նրան հանձնվեց 7 հազար դոլար: 3-րդ տեղը գրաված նրա հայրենակից Ալեքսանդր Գրիշչուկը, որ վաստակել էր 14 միավոր, արժանացավ 5500 դոլար պարգեւավճարի:

## «Ռուբինն» անակնկալ մատուցեց

Կայացան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի 1/16 եզրափակիչի առաջին հանդիպումները: Բելառուսի չեմպիոն ԲԱՏԷ-ն սեփական հարկի տակ գոլազուրկ ոչ-ոքի խաղաց թուրքական «Ֆեներբահչեի» հետ: ԲԱՏԷ-ի կազմում հայտավորված էր Զավեն Բադոյանը, սակայն նա խաղադաշտ չմտավ:

Իր երկրպագուներին հաճելի անակնկալ մատուցեց Կազանի «Ռուբինը», որը Մադրիդում 2-0 հաշվով պարտության մատնեց «Ատլետիկոյին»: Ընդ որում՝ իսպանական ակումբը 2012-ի ապրիլի 11-ից սեփական հարկի տակ չէր պարտվել: Հիշեցնենք, որ «Ատլետիկոն» Եվրոպայի լիգայի գործող գավաթակիրն է: Բացի այդ էլ, 2-րդ խաղակեսում «Ռուբինը» մնացել էր 10 հոգով: Այժմ «Ատլետիկոն» հայտնվել է շատ բարդ իրավիճակում ու կարող է ժամկետից շուտ վայր դնել գավաթակրի լիազորությունները:



Հաջող հանդես եկան նաեւ ռուսական մյուս 2 ակումբները, որոնք հաջորդ փուլ դուրս գալու լուրջ հայտ ներկայացրին: Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով առավելության հասավ «Լիվերպուլի» նկատմամբ: Աչքի ընկան Հալկն ու Սեմակը:

Մախաչկալայի «Անժին» էլ Մոսկվայի «Լուժնիկի» մարզադաշտում 3-1 հաշվով պարտության մատնեց «Հաննովերին»: Ընդ որում՝ խաղասկզբում դաշտի տերերը գոլ բաց թողեցին սեփական դարպասը, սակայն հետագայում Էտո՛ Օ-ն, Ահմեդովն ու Բուսուֆան 3 անգամ ստիպեցին հյուրերին խաղը վերսկսելու դաշտի կենտրոնից:

Ուկրաինական թիմերից ոչ մեկին չհաջողվեց հաղթել մրցակցին: Կիեւի «Դինամոն» սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը ֆրանսիական «Բորդոյի» հետ: Խարկովի «Մետալիստն» էլ հյուրընկալվելիս գոլազուրկ ոչ-ոքի խաղաց անգլիական «Նյուքասլի» հետ: Իսկ ահա «Դնեպրը» Շվեյցարիայում 0-2 հաշվով պարտվեց «Բազելին»:

Չեմպիոնների լիգայի գավաթակիր Լոնդոնի «Չելսին» Պրահայում տեղի «Սպարտակի» հետ մրցավեճում հաղթեց Օսկարի խփած միակ գոլի շնորհիվ: Գոլերի առատությամբ աչքի ընկավ Մյոնխենգլադբախի «Բորուսիայի» եւ իտալական «Լացիոյի» մրցավեճը, որում գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 3-3:

Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. «Տոտենհեմ»-«Լիոն»՝ 2-1, «Ինտեր»-ՉՖՌ՝ 2-0, «Շտուտգարտ»-«Գենկ»՝ 1-1, «Բայեր»-«Բենֆիկա»՝ 0-1, «Նապոլի»-«Վիկտորիա»՝ 0-3, «Այաքս»-«Ստյաուա»՝ 2-0, «Լեւանտե»-«Օլիմպիակոս»՝ 3-0:

## Մարկոսովն ամրապնդեց «Ուֆայի» հաղթանակը

Կիպրոսում նոր մրցաշրջանի մեկնարկին նախապատրաստվող «Միկան» ստուգողական առաջին խաղում անհաջող հանդես եկավ՝ 0-3 հաշվով զիջելով ՌԴ առաջին դիվիզիոնի առաջնության մասնակից «Ուֆային»:

Դեռեւս առաջին խաղակեսում «Ուֆան» 2 անգամ գրավեց «Միկայի» դարպասը: Ընդմիջումից հետո փոխարինման դուրս եկած Միխայիլ Մարկոսովը տուգանային հարվածով 3-րդ անգամ խոցեց «Միկայի» դարպասը: ՀՀ հավաքականի թեկնածուն այդ խաղում եւս մի քանի գոլային պահեր ունեցավ, սակայն չիրացրեց:

## «Իմպուլսը» մարզումները շարունակում է Կիպրոսում

Դիլիջանի «Իմպուլսն» ուսումնամարզական հավաքի է մեկնել Կիպրոս: Թիմը հանգրվանել է Այա Նապա քաղաքի «Ակտեա» հյուրանոցում: Հավաքին մասնակցում են թիմի 30 ֆուտբոլիստներ: Բացակայում է միայն թիմի ավագ Նարեկ Դավթյանը, որը ներկայումս Գերմանիայում բուժման կուրս է անցնում: Կիպրոսում «Իմպուլսը» մարզումներին զուգահեռ նաեւ ստուգողական հանդիպումներ կանցկացնի:

## «Գանձասարը» կրկին պարտվեց

Բելեքում ուսումնամարզական հավաք անցկացնող Կապանի «Գանձասարը» ստուգողական խաղում 0-2 հաշվով զիջել է Ղազախստանի բարձրագույն խմբում հանդես եկող «Վոստոկին»: Այս պարտությունն արդեն 4-րդն է ձմեռային նախապատրաստական շրջանում:

## ԹԵՆԻՍ

## Դավիթ Նալբանդյանը քառորդ եզրափակիչում

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը հաջող է մեկնարկել բրազիլական Սան Պաուլու քաղաքում անցկացվող թենիսի մրցաշարում: Առաջին մրցախաղում Նալբանդյանը 3 խաղափուլում հաղթել է չիլիացի Խորխե Ագիլարին (7-5, 5-7, 6-3), իսկ 2-րդում նա պարտության է մատնել իր հայրենակից Գուիդո Պելյային (6-4, 6-2):

Քառորդ եզրափակիչում Նալբանդյանը կմրցի իսպանացի Նիկոլաս Ալմագրոյի հետ: Վերջինս նախորդ փուլում պարտության էր մատնել չիլիացի Պոլ Կապդեւիլին (6-4, 6-7, 6-2):

## Յուրա Մովսիսյանը նոր վնասվածք է ստացել

Մոսկվայի «Սպարտակի» կազմում Իսպանիայում ուսումնամարզական հավաքին մասնակցող Յուրա Մովսիսյանը մարզման ժամանակ ձախ կրնկի վնասվածք է ստացել: Դրա հետեւանքով Յուրան մի քանի օր չի մարզվի ու բաց կթողնի «Սպարտակի» հերթական ստուգողական հանդիպումը: Բժիշկների հավաստմամբ, Յուրայի նոր վնասվածքը կապ չունի հնի հետ, որի պատճառով հայ ֆուտբոլիստը բավականին ժամանակ խաղադաշտ դուրս չեկավ:

## «Արարատ»-«Մերանի» հանդիպումն ավարտվել է ծեծկռտուքով

Բաթումում ուսումնամարզական հավաքի շրջանակում «Արարատը» ստուգողական 2-րդ հանդիպումն է անցկացրել՝ մրցելով Վրաստանի բարձրագույն խմբում հանդես եկող «Մերանի» թիմի հետ: Ինչպես տեղեկացանք «Արարատի» մամուլի քարտուղարությունից, խաղը 70-րդ րոպեին մնացել է անավարտ խաղադաշտում ծագած ծեծկռտուքի պատճառով: Այն ծագել է, երբ մրցավարը չհիմնավորված 11 մ հարված է նշանակել «Արարատի» դարպասին, իսկ վրացի ֆուտբոլիստներից մեկը բավականին կոպիտ է խաղացել «Արարատի» խաղացողի նկատմամբ: Երկու թիմերի մարզիչների որոշմամբ հանդիպումն ավարտվել է 70-րդ րոպեին: Այդ պահին հաշիվը հավասար էր՝ 2-2: Արարատցիներից 2 գոլերն էլ իր օգտին է գրանցել Գեւորգ Նռանյանը: Խաղից հետո մրցակցի մարզիչն իր ֆուտբոլիստների անվայելուչ պահվածքի համար ներողություն է խնդրել «Արարատի» գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանից:

## Մկրտիչ Նալբանդյանի հաղթական գոլը

Անթալիայում իր առաջին ստուգողական հանդիպումն անցկացրեց ՀՀ չեմպիոն «Ուլիսը», որը հաղթեց Մոլդովայի գավաթակիր «Միլսամիին»: Հանդիպման ելքը վճռեց Մկրտիչ Նալբանդյանը, որը բացեց գոլերի հաշիվն «Ուլիսում»: Նախկին շիրակցին վերջերս է տեղափոխվել «Ուլիս»՝ պայմանագիր կնքելով ակումբի հետ:

## Ուժերի ստուգատես պատասխանատու մրցաշարերից առաջ

Այսօր մայրաքաղաքի «Միկա» մարզասրահում կմեկնարկի ձյուդոյի պատանեկան (1996-98-ին ծնված) վարկանիշային մրցաշարը, որը նվիրված է Հայաստանում մարզաձեւի հիմնադրման 40-ամյակին: Տատամի դուրս կգան շուրջ 200 պատանի ձյուդոյիստներ՝ որոշելու ուժեղագույններին:

Մրցաշարի արդյունքներով, կձեւավորվի Հայաստանի ձյուդոյի պատանեկան հավաքականը, որը կնախապատրաստվի ընթացիկ մրցաշրջանի 2 կարեւորագույն մրցաշարերին: Մարտի 15-17-ը մեր պատանի ձյուդոյիստներն Անթալիայում կմասնակցեն Եվրոպայի գավաթի խաղարկությանը, իսկ հուլիսի 13-20-ը հանդես կգան Հոլանդիայում կայանալիք պատանեկան օլիմպիական փառատոնի ձյուդոյի մրցաշարում:

## Հանրահայտ արագավազորդը սպանել է ընկերուհուն



Պարաօլիմպիական խաղերի 6-ակի չեմպիոն, հարավաֆրիկացի հաշմանդամ արագավազորդ Օսկար Պիստորիուսը մեղադրվում է ընկերուհու սպանության մեջ: Ոստիկանությունը նրա բնակարանում գտել է հրազենային կրակոցից մահացած հարավաֆրիկացի մոդել Ռիվա Ստինկամպի դին: Պիստորիուսը նրա հետ հանդիպում էր անցյալ տարվա աշնանից:

Ըստ նախնական տվյալների, Ռիվան ցանկանալով անակնկալ մատուցել ընկերոջը, գաղտագողի մտել էր նրա բնակարան: Մթության մեջ չկողմնորոշվելով, հանրահայտ մարզիկն ընկերուհուն շփոթել էր կողոպտիչի հետ ու նրա վրա 4 անգամ կրակել էր:

Պիստորիուսին արդեն պաշտոնապես մեղադրանք է հարուցվել: Նա ներկայացել է Պրետորիայի դատարան, որտեղ մեղադրանքը հրապարակելուց հետո արտասվել է: Մարզիկի դատապաշտպանը ցանկացել է գրավի դիմաց նրան ազատել կալանքից, սակայն ոստիկանությունը չի համաձայնվել:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

# Օրվա հետքերով

# Ինչո՞ւ Սումգայիթում

*1-ին էջից*

Կանխազգալով վտանգը, Մուսաեւը, որ ընդհատել էր արձակուրդը եւ փետրվարի 21-ին Մինվոդիից վերադարձել, կարգադրել է փակել արվարձաններից Բաքու բերող բոլոր ճանապարհները: Հաջորդ օրը, հանդիպելով ճանապարհային ոստիկանության (խորհրդային ԳԱԻ-ի) արգելափակոցներին, ավտոբուսները շրջվում են դեպի Սումգայիթ: Նույն քարոզչությունն սկսվում է Սումգայիթի ուսանողական եւ բանվորական հանրակացարաններում (տես նույն տեղում):

Այդ «փախստականների» մասին տեղեկությունները հակասական են: Ադրբեջանական որոշ աղբյուրներ գրում են, որ նրանք «Բաքու եւ Սումգայիթ են հասել դեռեւս 1988 հունվարին»: Այլ հեղինակներ նշում են «փետրվարի կեսերը»: Ի՞նչ է տեղի ունեցել իրականում: 1988 փետրվարին, բայց եւ ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանին նախորդած ժամանակահատվածում, ՀԽՍՀ Կապանի շրջան զորախումբ է մտցվել՝ «կանխելու ադրբեջանցիների կոտորածը»: Ըստ այդմ, «Մոսկվայում ահազանգ էր ստացվել, որ կոտորածը ծրագրվում է իրականացնել փետրվարի 20-ին» (տես http://forum.bakililar.az/index.php?showtopic=67503):

Նույն օրերին Կապանում են գտնվել ԽՍՀՄ ՊԱԿ-ի հատուկ ազգամիջյան հարաբերությունների հարցով զբաղվող բաժնի երկու բարձրաստիճան սպա՝ Վլադիմիր Լուցենկոն եւ Վալերի Խմելյովը (տես http://www.trud.ru/article/01-02-2001/18874–10–ballov–po–shkale–politbjuro.html): Փետրվարի 20-ին նրանք արդեն Ստեփանակերտում էին: Լուցենկոն հիշեցնում է փետրվարի 22-ի միջադեպը, երբ Ասկերանում «հնչեցին կրակոցներ, երկու մարդ զոհվեց» (նույն տեղում): Զոհվել են ադրբեջանցիներ, որոնցից «առնվազը մեկը՝ ադրբեջանցի միլիցիոների կրակոցից» (տես Զարդուշտ Ալիզադե «Երկրորդ հանրապետության վախճանը»՝ վերոնշյալ հղումով): Ըստ Լուցենկոյի, դրանից հետո «Հայաստանի ադրբեջանական բնակչության շրջանում խուճապ առաջացավ: Կապանի շրջանի շատ բնակիչներ տեղաշարժվեցին դեպի Բաքու՝ փնտրելու պաշտպանություն» (http://www.trud.ru/article/01-02-2001/18874–10–ballov–po–shkale–politbjuro.html):

Փետրվարի 26-ին Կապան է ժամանել ԽՍՀՄ ԶՈՒ անդրկովկասյան խմբավորման առաջին փոխհրամանատար գեներալ Ալբերտ Մակաշովը՝ «լիազորված լինելով զորքեր մոբիլիզացնելու Նախիջեւանի ԻԽՍՀ-ից» (տես http://forum.bakililar.az/index.php?showtopic=67503): Կապանում են գտնվել նաեւ ԽՄԿԿ ԿԿ-ի, ՆԳՆ, ՊԱԿ-ի բարձրաստիճան ներկայացուցիչներ: «Ստուգողները նախապատրաստվող անկարգությունների ոչ մի նշան չեն հայտնաբերել: Արձանագրվել է իրավախախտման երկու դեպք՝ ադրբեջանական դպրոցը նրա իսկ տնօրենի կողմից հրկիզելու փորձը եւ հարձակումը Երեւան-Կապան գնացքի վրա» (տես http://forum.bakililar.az/index.php?showtopic=67503):

Նույն օրը Բաքվի հեռուստատեսությամբ ելույթ է ունենում ԽՍՀՄ դատախազի տեղակալ Կատուսեւը եւ հայտարարում, որ փետրվարի 22-ին «Ասկերանում ազգամիջյան ընդհարումների ժամանակ զոհվել է երկու երիտասարդ ադրբեջանցի»: Փետրվարի 26-ի ժամը 10-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Գորբաչովն ընդունում է Սիլվա Կապուտիկյանին եւ Զորի Բալայանին եւ հարցնում. «Դուք մտածե՞լ եք, թե ինչ կպատահի Ադրբեջանում ապրող հայերի հետ» (տես http://sumgait.info/sumgait/politburo-meeting-29-february-1988.htm): Քաղբյուրոյի փետրվարի 29-ի նիստում Գորբաչովը ասել է. «Որոշում ընդունելով (Ղարաբաղյան շարժումը պաշտպանող - Վ. Ա.) մենք զիջել ենք Ադրբեջանին, անկեղծ ասած...» (տես http://sumgait.info/sumgait/politburo-meeting-29-february-1988):

Փետրվարի 27-ին Երեւան-Բաքու գնացքը, ինչպես միշտ, կանգառ է ունենում Մինջեւան կայարանում: Կապանի 200 ադրբեջանցի բնակիչներ լցվում են վագոններ: Գնացքը շարժվում է, սակայն կեսճանապարհին՝ Իմիշլի շրջկենտրոնում, կանգնեցվում է: Տեղ է հասնում Ադր. ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Արթուր Ռասիզադեն (ներկայումս՝ Ադրբեջանի վարչապետ): Հրավիրվում են Զանգելանի եւ Իմիշլիի շրջանի ղեկավարությունը: Իմիշլի հասնելու մասին հեռախոսագիր է ստանում նաեւ կուսակցության Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար Ռոլանդ Ղոնյանը: Ուղեւորները հայտարարում են, որ «Կապանի ղեկավարությունից բողոքներ չունեն, իսկ Բաքու մեկնում են այնտեղ բնակվող հարազատների հորդորներով»: Կապան վերադարձի ճանապարհին Ռոլանդ Ղոնյանի մեքենան քարկոծվում է Զանգելանի շրջանի տարածքում (տես նույն տեղում/http// sumgait. info/ sumgait/politburo-meeting)

Քաղբյուրոյի փետրվարի 29-ի նիստում Գորբաչովն Ադրբեջանում «սկսված շարժումը» գնահատել է «կոմպրոմետացված»: Ապա ասել, որ «դա հատկապես նկատելի է Նախիջեւանում»: Չափազանց ուշագրավ է, որ նա անդրադարձել է նաեւ Հեյդար Ալիեւին, մեջբերել ԼՂ-ի մասին նրա արտահայտությունը. «Ղարաբաղը եղել է, կա եւ կմնա իբրեւ Ադրբեջանի անբաժանելի մաս»,- ապա ավելացրել. «Մենք փաստորեն նույն բանն ենք ասում (քաղբյուրոյի փետրվարի 21-ի որոշումն է նկատի ունեցել - Վ. Ա.), բայց ոչ այդքան հիմար փաթեթավորմամբ» (տես http//sumgait.info/sumgait/politburo-meeting-29):

Իրադարձություններից մի քանի ամիս առաջ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի /վարչապետի/ 1-ին տեղակալի եւ քաղբյուրոյի անդամի պաշտոններից հեռացված, բայց այդ պահի դրությամբ դեռեւս կառավարությունում պետական խորհրդականի ծառայության մեջ գտնված Հեյդար Ալիեւին հիշելով ի՞նչ է նկատի ունեցել Միխայիլ Գորբաչովը: Դիտարժան է, մանավանդ, որ նա բավական մանրամասնորեն անդրադարձել է ՀԿԿ ԿԿ 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանի «հարցին» (սա այլ խոսակցության թեմա է), բայց ոչինչ չի ասել Ադրբեջանի ղեկավար Բաղիրովի մասին: Կարծում ենք, դա պատահական չէ. Գորբաչովը, հավանաբար, քաղբյուրոյի անդամներին ակնարկել- հասկացրել է, որ «հատկապես Նախիջեւանում նկատվող եւ կոմպրոմետացված շարժման» աղբյուրը Հեյդար Ալիեւի «հիմար փաթեթավորմամբ» ասածն է ԼՂԻՄ-ի՝ Ադրբեջանի «անբաժանելի մաս լինելու» մասին:

Փետրվարի 28-ին Սումգայիթում վերջին «միտինգն» ավարտվել է «մահ հայերին» կոչով: Այն հնչեցրել է քաղաքային դպրոցներից մեկի տնօրեն, «ծագումով Հայաստանից քուրդ» (Զարդուշտ Ալիզադե) Խըդըր Ալոեւը: 1993-ին նախագահի պաշտոնում առաջին անգամ այցելելով Սումգայիթ, Հեյդար Ալիեւը դիմավորողներին հարցրել է. «Իսկ ո՞ւր է մեր Խըդըրը» (տես Զարդուշտ Ալիզադե, «Երկրորդ հանրապետության վախճանը»՝ վերոհիշյալ հղումով): Նրանք գրկախառնվել են՝ վերադարձած «նահապետը» եւ սումգայիթի գաղափարախոսը: 1995-2000 թթ.-ին Ալոեւը եղել է Միլլի մեջլիսի պատգամավոր:

Այժմ՝ «ինչո՞ւ Սումգայիթում»:

Հեյդար Ալիեւի փորձառության գործիչը չէր կարող չկանխազգալ, որ Ղարաբաղյան շարժումը ԼՂԻՄ-ում, Հայաստանում եւ Ադրբեջանում հանգեցնելու է իշխանափոխությունների: Ադրբեջանում առաջին դեմք նշանակվելու երկու հիմնական թեկնածու կար: Մեկը Ֆուադ Մուսաեւն էր՝ Բաքվի քաղկոմի 1-ին քարտուղարը, մյուսը՝ Ջահանգիր Մուսլիմզադեն՝ Սումգայիթի կուսակցական կազմակերպության ղեկավարը: Հայկական ջարդեր կազմակերպելու առաջին փորձն արվել է Բաքվում: (Ֆուադ Մուսաեւի վկայությունը տես նաեւ Թոմ դը Վաալի «Սեւ այգի» գրքում): Երկրորդը Սումգայիթում հաջողվել է: Մուսլիմզադեն հեռացվել է պաշտոնից եւ կուսակցությունից:

«Նահապետի» հաշվարկը, սակայն, իրեն չի արդարացրել: Գորբաչովը չի դիմել Հեյդար Ալիեւի «պատրաստակամ օգնությանը»: Ընդհակառակը, 88-ի մայիսին նա Ադրբեջան է ուղարկել Աբդուռահման Վեզիրովին, որի կուսակցական կարիերան 1974-ին ընդհատվել էր Հեյդար Ալիեւի հետ ունեցած տարաձայնությունների պատճառով: Վեզիրովը փորձել է մաքրել «ալիեւյան ախոռները»: Ապարդյուն: Հին «գվարդիան» չէր կարող հանձնվել: Ծնվում են նոր «ալոեւ»-ներ՝ բանաստեղծ Խալիլ Ռզան, որ 88-ի նոյեմբերին հրկիզում է Բաքվի հայկական եկեղեցին, «երիտասարդ բանվոր» Նեյմաթ Փանահովը, որ «հանկարծ դառնում է» Լենինի անվան հրապարակի գլխավոր ճառախոսը, գործադուլային եւ Հայաստանն ու ԼՂԻՄ-ը շրջափակելու շարժման «միակ կազմակերպիչը»: Եվ, ամենացայտուն սադրիչը՝ Աբուլֆազ Ալիեւը (Էլչիբեյը), որին, պարզվում է, 1976-ին ՊԱԿ-ի «ճիրաններից» ազատել էր Հեյդար Ալիեւը. «Զահել տղա է, ցանցառ-ցանցառ դուրս է տալիս»,- ԿԿ բյուրոյի նիստում ասել էր ՊԱԿ-ի գեներալությունը կուսակցական առաջնորդությամբ փոխած ապագա «համազգային առաջնորդը»:

Եվ՝ վերջինը. «Սումգայիթը կազմակերպել է ՊԱԿ-ը»,- պնդում են Ադրբեջանում: Իսկ Սեւիլ Ալիեւայի ամուսինը, Հեյդար Ալիեւի փեսան, որ «նահապետի» վերադարձից հետո պիտի անցներ դիվանագիտական աշխատանքի, 88-ին ՊԱԿ-ի գնդապետ էր... Իսկ թե ինչո՞ւ Բունիաթովը շրջանառեց «Սումգայիթը ձեռնտու էր հայ ծայրահեղականներին» միտքը, պատասխանը «ջրի երեսին» է. նրա «պատմագիտական հայտնագործությունների պիկը» համընկնում է Հեյդար Ալիեւի քաղաքական կարիերայի վերելքին՝ Բաքվում, ապա եւ Մոսկվայում: Եկել էր պատրոնին վարձահատույց լինելու ժամանակը...

ՍՏԱՄԲՈՒԼ

# «Ամեն տարի ապրիլին ցեղասպանության ճառը եփում եւ մեզ են հրամցնում»

*1-ին էջից*

Ըստ երեւույթին, ընդունված համարելով ազդանշանը, որն ուղղված էր ինչպես հայերին, այնպես էլ Թուրքիայում ցեղասպանության ճանաչման համար պայքարող մտավորականներին, Ստամբուլի քաղաքային իշխանությունները հարձակումներում շրջանառության մեջ դրեցին կողոպուտի վարկածը, առանց բացառելու ապրիլի 24-ի եւ հայկական բանաձեւերի հնարավոր ազդեցությունը այս կողոպուտի վրա:

Այդ առումով հատկանշական են Ֆաթիհի քաղաքապետ Մուստաֆա Դեմիրի պարզաբանումները: Նա դրանք արել է «Սամանյոլու» հեռուստաալիքի էկրանից, չմոռանալով հարձակումների թիվը 5-ից կրճատել 3-ի:

Ինչպես երեկ նշված էր հեռուստաալիքի կայքէջում, քաղաքապետն ասել է, որ իրականացված 4 հարձակումներից 3-ի թիրախը «հայկական ծագումով քաղաքացիներն» են, տարեց եւ միայնակ ապրող կանայք, որոնք ոստիկանության տվյալներով ծեծի են ենթարկվել իրենց բնակարանի մուտքի մոտ, ապա հանցագործները, ներխուժելով բնակարան, կողոպտել են թանկարժեք իրերը, քաղաքում կողոպուտի միջադեպեր հաճախակի են լինում, ուստի դրանք չեն կարող առնչվել հայ եւ մահմեդական քաղաքացիների միջեւ սեպ խրելու դրսեւորումներին:

Քաղաքապետ Դեմիրը միաժամանակ նշել է, որ այս դրսեւորումների մասին լուրերն Ամերիկայից են տարածում, ապա եւ ավելացրել. «Ամեն տարի մեր առջեւ հայկական հարցեր եւ ցեղասպանության խնդիրներ են դնում: Դա ինչ-որ կերպ օգտագործում են: Մինչդեռ 560 տարի մենք համատեղ գոյակցել ենք, հարեւանություն ենք արել: Ապրիլին նորից օրակարգ է մտնելու հայկական բանաձեւը: Թուրքիան աշխարհում բարձրացող արժեք է: Մինչ նրա ազդեցությունը տարածվում է սահմաններից դուրս, այդ հարցը ճաշի պես ամեն տարի եփում եւ մեզ են հրամցնում: Իրավապահ մարմինները աշխատում են: Տա Աստված՝ հայտնաբերվեն հանցագործները, որ փարատվեն հարձակումների էթնիկ բնույթի մասին պնդումները»:

Քաղաքապետի խոսքերը մեկնաբանության կարիք չեն զգում, քանի որ ժողովուրդն արդեն ասել է՝ «գող, սիրտը դող»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ




## 15.03.2013թ. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի կազմակերտման և անցկացման մասին

»Արցախ ՀԷԿ« բաց բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ Ընկերության 2013 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել այն ընկերությունները, որոնք ունեն ավելի քան 3 տարվա գործունեություն ֆինանսական աուդիտի բնագավառում (ընդ որում, մրցույթում նախապատվությունը կտրվի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական ընկերություններին):

Մրցույթի մասնակիցները պետք է նաև ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը.

ա) աուդիտի ընգրկման բնագավառները,

բ) աուդիտն իրականացնող խմբի աշխատակիցների աշխատանքային փորձն ու որակավորումը

գ) աուդիտի անցկացման ժամկետները առաջին այցելությունից մինչև վերջնական եզրակացության տրամադրումը,

դ) աուդիտի իրականացման ընդհանուր գինը ներառյալ հարկերը և այլ ծախսերը

ե) պայմանագրային պարտավորություններում ամրագրման ենթակա և այլ լրացուցիչ տեղեկատվություն (կտրամադրվի մասնակիցներին ըստ մրցույթին մասնակցելու մտադրության մասին Ընկերության գրավոր տեղեկացման, ընդ որում առանց այս լրացուցիչ տեղեկատվության ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն):

Մրցույթով հաղթող ճանաչված ընկերությունը պարտավորվելու է »Աուդիտորական եզրակացություն« և »Նամակ ղեկավարությանը« փաստաթղթերը տրամադրել Ընկերությանը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ոչ ուշ, քան 2014 թվականի ապրիլի 1-ը:

Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն Ընկերությանը ոչ ուշ, քան 2013 թվականի մարտի 15-ը, երկու կնքված ծրարներով:

Մրցույթի հաղթողը որոշվում է »Արցախ ՀԷԿ« ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.

»Արցախ ՀԷԿ« ԲԲԸ, ԼՂՀ ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա

հեռ. (0479) 94-28-58 e-mail: artsakhhek@mail.ru

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 15.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: